ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՊԱՐՏԱԴԻՐ ՍՊԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՄՈՐԹԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՁԵՌՆԱՐԿԱԾ ՔԱՅԼԵՐԻ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿ
ՀԳՀՄ ՓՈԽՆԱԽԱԳԱՀ՝ ԹԱԹՈՒԼ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՕԳՈՍՏՈՍ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

1.1. Ի՞նչ է սպանդանոցը և որն է դրա կիրառական նշանակությունը 3

1.2. Սպանդանոցի ազդեցությունը սահմանված նպատակի տեսանկյունից 4

2. ՄՍԻ ԱՐԺԵՇՂԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ..... 7

2.1. Պայմանական առաջին փուլ..... 7

2.2. Պայմանական երկրորդ փուլ 8

2.3. Պայմանական երրորդ փուլ 8

2.4. Պայմանական չորրորդ փուլ 9

3. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿԱԾ ՔԱՅԼԵՐԻ ՈՒ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ..... 12

3.1. Մարտավարական պայմանական առաջին փուլ 12

3.2. Մարտավարական պայմանական երկրորդ փուլ 14

4. ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ..... 19

4.1. Վարչարարական ծախսեր..... 19

4.2. Գործարար ներդրումներ 22

4.3. Հանրության սպասելիքները..... 23

4.4. Անասնապահության ոլորտի սպասելիքները 24

4.5. Ներքին և արտաքին շուկաներում միս- մսամթերք իրացնողների սպասելիքները..... 24

4.6. Այլ մթերքներ ու ապրանքներ ստանալու հնարավորությունները..... 25

5. ԱՄՓՈՓՈՒՄ 26

5.1. Ներգրավված պաշտոնատար անձանց թերի կոմպետենցիաները 26

5.2. ժողովրդավարական սկզբունքների վերաբերյալ պետական մարմիններում ընդգրկված պաշտոնատար անձանց գիտելիքներն ու պատկերացումները 28

5.3. Զարգացման երաշխավորողներ / ագրարային կրթություն)..... 30

6. ԱՌԱՁԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 32

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիներին գյուղատնտեսության բնագավառի պետական կառավարման մարմինները նախաձեռնեցին շատ կարևոր, բայց անկատար մի ծրագիր, որն իր բազմաթիվ թերությունների պատճառով դժգոհություն առաջացրեց և քննադատվեց անասնապահության ոլորտում ներգրավված ֆիզիկական ու իրավաբանական անձանց մոտ և ուղեկցվեց բողոքի տևական ցույցերով, անհնազանդության տարբեր ակցիաներով[1]:

Սույն վերլուծությունը վերաբերում է այս ծրագրի մտահաղացմանը, մեր երկրի ու մեր բնակչության իրական հնարավորություններին, շատ դեպքերում մեր կենցաղի ավանդականորեն ձևավորված կարծրատիպերին, որոնք ըստ էության ծրագրի հեղինակները հաշվի չեն առել: Թերևս դա է պատճառը, որ այն անընդունելի է համարվել ոչ միայն գյուղատնտեսական այս կարևորագույն ոլորտի մասնագետների, տնտեսության այդ ճյուղով զբաղվողների համար, այլև առաջացրել է հանրության մեծ դժգոհությունը[2]:

Խոսքը՝ պարտադիր սպանդանոցային մորթին համատարած անցում կատարելու նպատակով պետական մարմինների կողմից ձեռնարկած գործողությունների մասին է:

1.1. Ի՞նչ է սպանդանոցը և որն է դրա կիրառական նշանակությունը

Սպանդանոց, սպանդանոցային մորթ, սպանդանոցային ենթամթերք և այլ հասկացությունները հաճախ են հնչում տարբեր հանդիպումների, քննարկումների կամ ելույթների ընթացքում, նաև «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքով և «Մսի և մսամթերքի անվտանգության մասին[3]» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով տրված են «սպանդային մթերք», «կենդանիների սպանդ», «սանիտարական սպանդ» հասկացությունների սահմանումը, սակայն թե ինչ է սպանդանոցը ՀՀ իրավաբանական նորմատիվային փաստաթղթերում որևէ մեկնաբանության չենք հանդիպում, սահմանում չկա:

Քանի որ սույն վերլուծության առարկան սպանդանոցն է, և անհրաժեշտ է հստակ պատկերացում ունենալ վերջինիս վերաբերյալ, ուստի դիմենք հայերենի արդի բացատրական բառարանին, ուր **սպանդանոցը՝ «անասուններ մորթելու և միսը նախնական մշակման ենթարկելու արտադրական ձեռնարկություն է[4]»:** Ձևակերպումը հստակորեն ցույց է տալիս, որ դա ընդամենը ձեռնարկություն է, մի վայր, որը պետք է մաս կազմի մի ամբողջական արժեշղթայի, որը կարող ենք կոչել «մսի արժեշղթա», «անասնապահական արժեշղթա» կամ «անվտանգ սննդամթերքի արժեշղթա»:

Անչափ կարևոր է, թե նախաձեռնության հեղինակների կարևորած արժեշղթայում ի՞նչ տեղ է հատկացվել սպանդանոցին, ի՞նչ խնդիրներ պետք է լուծի, ինչ նպատակ է հետապնդում, ինչ ենք ստանալու արդյունքում սպանդանոց ունենալու պարագայում:

---

[1] Ինֆոթեզեր լրատվական՝ https://infocom.am/hy/article/12978

[2] Մսի և մսամթերքի անվտանգության մասին մաքսային միության տեխնիկական կանոնակարգ https://epress.am/2020/01/21/1358.html

[3] https://snund.am/public/storage/uploads/texnikakan_mis_1656664758.pdf

[4] Հայերենի բացատրական բառարան https://bararanonline.com/%D5%BD%D5%BA%D5%A1%D5%B6%D5%A4%D5%A1%D5%B6%D5%B8%D6%81

Ի՞նչ նպատակ կամ նպատակներ կարող է ունենալ սպանդանոցի կառուցումն ընդհանրապես. օրինակ՝

- Անասունների մորթն իրականացնել սահմանված մեթոդով, ձևով,
- Նպաստել առողջ մսի, մսամթերքների, սպանդանոցային ենթամթերքների ստացմանը,
- Պաշտպանել շրջակա միջավայրը անասնապահական ծագում ունեցող թափոններից,
- Կոնսոլիդացնել անասնապահական ծագում ունեցող մթերքն ու հումքը հետագա վերամշակման կամ իրացման համար,
- Թիրախ պոպուլյացիաներից ապահովել անհրաժեշտ անասնագլխաքանակ տարբեր լաբորատոր փորձերի համար,,
- Հաշվառել պարենային անվտանգության կարևոր բաղադրիչի շրջանառությունն ու ծավալները և այլ բազում նպատակներ:

ՀՀ պետական մարմինների ձեռնարկած սույն ծրագրում սպանդանոցային ցանցի կառուցման նպատակը[5] առողջ միս-մսամթերք և սպանդանոցային ենթամթերք ստանալն է:

Բայց, արդյոք սպանդանոցային ցանց ունենալը բավարար է առողջ միս-մսամթերք ունենալու համար, թե այլ համալրող գործոողություններ ևս պետք է ձեռնարկել: Այսինքն՝ խնդիրը դիտարկված է արդյոք կապակցված և ամբողջական գործընթացների տեսանկյունից: Հարցի պատասխանն է «ոչ», քանի որ «առողջ միս», «անվտանգ միս-մսամթերք» տերմինները կիրառվում են հաճախ, սակայն որևէ նորմատիվային ակտ, զարգացման ծրագիր, ուր ներկայացված կլինի առողջ միս-մսամթերք ստանալու Հայաստանին բնորոշ կոնցեպտ ծրագիր, պատասխանատու պետական մարմինների պաշտոնական էջերում չենք տեսնում:

Սպանդանոցը՝ ինչպես ներկայացվեց վերևում, անասուններ մորթելու և միսը նախնական մշակման ենթարկելու արտադրական ձեռնարկություն է: Ուստի, եթե բավարարվում ենք միայն սպանդանոցային ցանց ունենալ, առանց հարակից խնդիրներին անհրաժեշտ ուշադրության և նրանց համապարփակ լուծումների, ապա սպանդանոցը կարող է ունենալ թե դրական, թե բացասական, կամ որևէ ազդեցություն չունենալ, դառնալ անիմաստ, միջոցների ու ռեսուրսների անհարկի վատնման պատճառ:

1.2. Սպանդանոցի ազդեցությունը սահմանված նպատակի տեսանկյունից

Սպանդանոցը կարող է **դրական ազդեցություն** ունենալ վերը նշված ցանկացած նպատակի ձևակերպման դեպքում, եթե մանրակրկիտ հաշվարկված են բոլոր գործոնները և վտանգները: Դրական արդյունքն ակնկալելի է այն դեպքում, երբ դրանք գտնվեն կառավարելի միջավայրերում, հստակ գնահատված են ռիսկերը և ինստիտուցիոնալ մակարդակում անհրաժեշտ բոլոր միջոցների ներդրմամբ, հավասարակշռված ու գիտակցված միասնական ջանքերով առաջարկված են նրանց չեզոքացնելու ուղիները: Եթե առողջ միս-մսամթերք ստանալը խնդիր է և պատասխանատուների համոզմամբ միակ կամ ամենաարդյունավետ լուծումը սպանդանոցային ցանցի ստեղծումն է, ապա անհրաժեշտ է ապահովել հարակից այն քայլեր ու գործողություններ, որոնց օգնությամբ սահմանված նպատակը կդառնա հասանելի:

[5] «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծի ընդունման հիմնավորում
http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=8850&Reading=0

Այսինքն՝ նախաձեռնության մեկնարկում պետք է ունենանք մի շարք հարցերի հստակ պատասխաններ՝

- Ի՞նչ է սպանդանոցը, ի՞նչ աշխարհագրական կամ տարածքային տեղաբաշխվածություն պետք է ունենա և ի՞նչ կարգավիճակ,
- Ի՞նչ կարողություններով ու հմտություններով օժտված պետք է լինի սպասարկող աշխատակազմը, և ի՞նչ պարբերականությամբ պետք է սանիտարական ստուգման ենթարկվի,
- Ինչպի՞սի սանիտարական պահանջներ պետք է սահմանել սպանդանոցների համար,
- Ինչպե՞ս կարձագանքեն մսի արժեշղթայում ներկայում գործող կողմերն ու մասնակիցները,
- Ի՞չն ներդրումներ են պահանջվում, և արդարացված են արդյոք այդ ներդրումները
- Արդյոք սպանդանոցայի ցանցի ստեղծումն խնդրի լուծման միակ տարբերակն է, թե այլ տարբերակներ ևս կան և այլն :

Չենք հանդիպում վերը նշված հարցերի պատասխանները 2016 թվականին նախաձեռնած և սպանդանոցային մորթի ժամկետների սահմանման մասին ՀՀ կառավարության որոշման և հաջորդիվ այդ գաղափարը սնուցող որևէ իրավական փաստաթղթում: Միայն անհեռանկարային ու չարդարացված, վերացական տպավորություն է ստեղծվել, թե սպանդանոց կառուցելով բավարար է առողջ միս-մսամթերք ունենալու համար:

Դրական չի կարելի համարել պատկան մարմինների կողմից որդեգրած այս նախաձեռնությունը:

Դիտարկենք սպանդանոցի առողջ միս-մսամթերք ստանալու նպատակին հակասող՝ **բացասական**, **վնասակար ազդեցությունը**:

Սպանդանոցը վայր է, ուր տարբեր վայրերից բերված կենդանիներ են կուտակվում: Ուստի հիվանդ կենդանին կարող է վարակել սպանդանոցում առկա մնացած անասուններին, մեկ անառողջ մթերքից, ենթամթերքից, կամ հումքից կարող է ախտահարվել ողջ մսամթերքը: Սխալ կառավարման պարագայում, սպանդից հետո մարդկանց և կենդանիների համար նախատեսված տարբեր մթերքները կարող են դառնալ հիվանդությունների ու համաճարակների աղբյուր: Կամ պատշաճ սանիտարական հսկողությունից դուրս մնացած սպանդանոցային ծառայողը կարող է վարակվել և վարակել տարբեր վարակիչ հիվանդություններով:

Բացասական գործոններից է նաև սպանդանոցային կայուն ախտածինների հանգամանքը, որը պարտադիր կերպով ձևավորվելու է սպանդանոցային գործունեության որոշակի ժամանակահատվածի ընթացքում[6]: Միջազգային գիտական փորձն ու վիճակագրությունը հիմնավորում է, որ որոշակի ժամանակ աշխատելու ընթացքում սպանդանոցներում և հարակից շինություններում ձևավորվում են ախտահանությունների ազդեցությանը չենթարկվող կայուն ախտածիններ, որոնց չեզոքացման, հիվանդություններ չառաջացնելու ունակությունից զրկելու համար անհրաժեշտ է մշակել և կիրառել յուրահատուկ ծրագրեր:

Վերլուծությունը հանգեցնուն է մի տարօրինակ իրավիճակի, երբ սպանդանոցը կարող է ունենալ **չեզոք դերակատարություն**, այսինքն ընդունված արժեշղթայում տիրող մեկնարկային իրավիճակի վրա որևէ ազդեցություն չունենալ, նույնությամբ թողնել ոլորտում առկա իրողությունը՝ դաշտից խոհանոց, ուստի այս պարագայում սպանդանոց ունենալը անիմաստ է դառնում միջոցների ներդրման ու սպասելիքների տեսանկյունից:

Այն, որ սպանդանոցը լինելով սննդամթերքի արտադրության շղթայի մաս է, անկախ իր հնարավոր ազդեցությանը, ինքնուրույն, առանձին ունակ չէ լուծելու առողջ միս-մսամթերք ստանալու խնդիրը՝ ակնհայտ է, թեկուզ հենց այն պատճառով, որ մատակարարը՝

[6] Այս խնդրին որևէ անդրադարձ չկա, որևէ փաստաթղթում:

անասնապահությամբ զբաղվող սուբյեկտն է, սպասարկողը՝ որոշակի մասնագիտական հմտություններով ու ունակություններով օժտված աշխատակազմը, իսկ իրացման շուկան՝ վաճառքի ու վերամշակման բազում կետերը, վերջնական սպառողը՝ բնակչությունն է, ողջ հասարակությունը: Ուստի, հաջողության գրավականը բոլոր մասնակիցների հստակ համագործակցությունն է, նրանց դիրքորոշումը սպանդանոցի վերաբերյալ, որը առանցքային է և անչափ կարևոր:

Այս իսկ պատճառով ստորև ներկայացնենք, թե ինչպիսի՞ հակումներ ունեն և ինչպիսի՞ է մեկնարկային վերաբերմունք կա ձևավորված մսի արժեշղթայի մասնակիցների մոտ մսացու կենդանիների մթերմամբ, վաճառքով, իրացմամբ զբաղվողների վերաբերյալ: Քանի որ անասնապահությամբ զբաղվող անձի՝ մատակարարի համար սպանդանոցն առաջին հերթին կենդանիների մթերման վայր է, հնարավորություն:

2. ՄՍԻ ԱՐԺԵՇՂԹԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

Ի՞նչպիսի ավանդույթ, պատմական հիշողություն ու վերաբերմունք ունի մեր քաղաքացին անասնապահական մշակույթի, սննդի արդյունաբերության այդ կարևորագույն ոլորտի, մսամթերքի արարման և իրացման արժեշղթայի հիմնական մասնակիցների վերաբերյալ: Ծրագրի նախաձեռնողները դա չգիտեն ու թերևս չեն ուզում իմանալ, թե ինչ ժառանգություն ենք ստացել սույն նախաձեռնության մեկնարկում: Ինչու՞ ենք համոզված, քանի որ որևէ տեղ այս խնդիրներին անդրադարձ անգամ չկա:

Ի՞նչպիսի վարքագիծ կդրսևորեն կողմերը, ո՞վ կտուժի, ո՞վ կշահի և շատ այլ հարցեր, որոնք պատասխաներ են պահանջում, այլապես ծրագրի առաջխաղացման և հնարավոր խոչընդոտները հաղթահարելու համար անհրաժեշտ կլինի ներդնել լրացուցիչ միջոցներ ու ջանքեր, ցավոք, երբեմն անիմաստ, ուշացած: Որպեսզի պարզ լինի, թե քանի մատակարարի՝ անասնապահությամբ զբաղվող անձանց հետ գործ կունենա սպանդանոցները և քանի ուղղակի շահառու ունենք միայն մատակարաման մասով, կներկայացնեմ ՀՀ Վիճակագրական կոմիտեի կողմից 2014 թվականին կատարված համատարած հաշվառման տվյալները, որոնց համաձայն[7], սպանդանոցային ցանցի սպասարկողները՝ միս արտադրողները, ՀՀ -ում 181602 միավոր են, որոնցից՝ ֆիզիկական անձի կարգավիճակ ունեին 181516-ը, իսկ իրավաբանական անձի՝ 86-ը:

Ինչպես արդեն ուրվագծվում է, սույն նախաձեռնության ձախողման հիմնական պատճառներից մեկը, այս փաստերի անտեսումն ու չիմացությունն է, զուգորդված պետական մարմինների ոչ կոմպետենտ վարքագծին:

Թե ինչպե՞ս են կենդանիների մորթն իրականացվել մինչ այս նախաձեռնությունը, որտեղի՞ց և ի՞նչպիսի միս ու մսամթերք են ձեռք բերել մեր երկրի բնակչությունը, ինչպի՞սի գործող համակարգեր գոյություն ունեին հակիրճ ներկայացվում է՝ ստորև:

Նախորդող՝ խորհրդային ժամանակաշրջանում անասունների մորթի կազմակերպման համար գոյություն ունեին ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՉՈՐՍ ՓՈՒԼԵՐ [8]:

2.1. Պայմանական առաջին փուլ

Գյուղերում անասնատերերը, լինեին դրանք մասնավոր մարդիկ, սովխոզ, թե կոլխոզներ, մորթում էին սեփական անասունները և վաճառում տեղում: Այս պայմանական փուլում մորթի համար հարմարեցված հատուկ տարածքներ կային յուրաքանչյուր անասնատիրոջ բակում: Մորթն իրականացնում էին հմուտ անձինք՝ մսագործները, որոնք նաև ստանձնում էին միսը տեսակավորողի և վաճառողի գործառույթները: Սա կարող էր լիներ անասնաբուժական հսկողության ներքո և հաճախ՝ առանց դրա:

Քաղաքներում սա իրականացվում էր այլ կերպ՝ որևէ անասնաֆերմայից, հիմնականում անձնական կապերի շնորհիվ կենդանին տեղափոխվում էր վաճառքի վայր, որտեղ էլ, երբեմն պոտենցիալ գնորդների ներկայությամբ մորթվում էր ու վաճառվում:

---

[7] ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք էջ:
https://armstat.am/am/?nid=23

[8] Սահմանումը չունի գիտական հիմնավորում, մեջբերված է սույն վերլուծականի բովանդակությունը կանոնակարգելու նպատակով:

Մեր կենցաղին ծանոթ փորձառու մարդիկ կհիշեն, թե տարիներ առաջ ինչպես էին բակերում, բնակավայրերի բանուկ հատվածներում, հիմնականում առավոտյան ժամերին իրականացվում տարբեր կենդանիների մորթը և ինչ արագությամբ էր իրացվում միսը:

Մայրաքաղաքի կենտրոնում նման պատկեր կարելի էր տեսնել միայն շուկաների մոտ, իսկ կենտրոնին մոտ ամենահայտնի կետը «Հաղթանակի» կամուրջի մերձակայքն էր, երբեմնի «Ցախի մեյդանը» քաղաքից դուրս եկող խճուղիների առանձին հատվածներ:

Իսկ մարզերում սա թերևս «լավ միս» գնելու հիմնական պրակտիկան է: Տարածված պրակտիկա է, երբ գնորդը նախապես պատվիրում է որոշակի բտվածություն և քաշ ունեցող կենդանի, որի մորթն իրականացվում է իր ներկայությամբ: Այսօրինակ մորթին առավել հաճախ հանդիպում ենք տոնական օրերին ընդառաջ:

2.2. Պայմանական երկրորդ փուլ

Հիմնականում քաղաքներում գործող կոլտնտեսային շուկաներն ու մսի խանութներն էին: Այստեղ ևս իրացվում էր մեծաքանակ միս, գերազանցապես՝ բնակչությանը: Այստեղ անասնատերերը իրենց խաբված էին զգում, գլուխը, կաշին, ներքին օրգանները չնչին գներով կամ որոշ դեպքերում էլ անվճար բաժին էին հասնում մսավաճառին, իսկ պարտադիր զեղճերը անասնատիրոջ հաշվին գործող պրակտիկա է մինչ այժմ: Եթե անասնատիրոջ համար հնարավորություն կար ինքնուրույն վաճառել սեփական անասունը, ապա նախապատվությունը տրվում էր դրան: Ազնիվ շուկայական համագործակցություն այստեղ գրեթե չէր կայանում, ինչ էլ նպաստում էր մսավաճառի նկատմամբ բացասական վերաբերմունքի ձևավորմանը:

Իրացման այս վայրերից միս վերամշակող խոշոր կազմակերպությունները գրեթե չէին օգտվում: Սպանդանոցային մորթի մասին այս պարագայում խոսք անգամ չէր կարող լինել, մորթն իրականացնում էր մսագործ-մսավաճառը, որը անասնատերն էր կամ նրա վստահված անձը:

Հետագայում, երբ միս վաճառողը իր կողմից վաճառվող մսի որակի, գնի, վարքագծի անձնական հուսալիության և այլ գործոնների շնորհիվ իր շուրջ ձևավորեց գնորդների կայուն շուկա, մսագործն ու մսավաճառը ֆունկցիոնալ առումով բաժանվեցին, բայց նրանց միջև համագործակցությունը սերտորեն պահպանվում էր, քանի որ թե անասնատիրոջ և թե մսագործի պատվիրատուն մսավաճառն էր:

2.3. Պայմանական երրորդ փուլ

Կենդանիների մորթի հաջորդ փուլը մսի մթերման գրասենյակներն էին, որտեղ անասնատերերից, սովխոզներից, կոլխոզներից մթերվում էր կենդանի անասուններ, որոշակի սահմանված արժեքով: Արժեքը որոշվում էր կենդանու տարիքով, գիրությամբ ու ֆիզիոլոգիական վիճակով: Որպես կանոն արժեքը սահմանում էր մսի մթերման գրասենյակի միակ՝ արտոնյալ պատասխանատուն, ըստ պետական գնացուցակի: Շատ էին դեպքերը, երբ վերջինս, անասնատիրոջը անհարկի զեղջեր էր պարտադրվում, կամ թերակշռվում էր, կամ գնահատվում էր առավել ցածր արժեքով, քան ենթակա էր մթերման կենդանին, ինչն էապես բացասաբար էր ազդում վերջնարդյունքի վրա, ու անասնատերը տուժում էր: Սա ևս անասնատիրոջ համար սեփական մսացուն վաճառելու անցանկալի վայր էր:

Մթերված կենդանիներին տեղափոխում էին մսի կոմբինատներ, որտեղ էլ գործում էին մորթի համար նախատեսված տարածքներ ու սպանդանոցները, որոնք իրենց տեխնիկական հնարավորություններով շատ քիչ բան էին հիշեցնում սպանադանոցին ներկայացվող արդի պահանջներին:

2.4. Պայմանական չորրորդ փուլ

Սրանք մսի վերամշակման կոմբինատներն էին (խոսակցական լեզվում՝ «երշիկի գործարանները», որտեղ մթերվում էին՝ թե անհատ անասնատերերի, թե սովխոզների, թե կոլխոզների մսացու կենդանիները:

Այստեղ ևս գնի սահմանման, կենդանու բտվածության աստիճանի գնահատման զեղչերի հաշվարկները, պարտադիր կենդանու տիրոջ հաշվին էին, ինչպես մսի մթերման գրասենյակներում: Գրեթե չէին կարևորվում գործընկեր անասնատիրոջ շահերը, միակողմանի շահույթ հետապնդելու ձևավորված պրակտիկայով արագ հարստանալու հավակնությունը այս հաստատություններում առկա էր:

Անասնատերը՝ միս արտադրողը, երկրորդ, երրորդ, և չորրորդ պայմանական մակարդակների հետ աշխատում էր հնարավորինս քիչ առևտրային շփումներ ունենալ, համոզված լինելով, որ խաբվելու է կրելով նյութական կորուստներ[9]: Այս պատճառներով, անասնատերերը նախապատվությունը տալիս էին և ներկայումս ևս տալիս են կենդանու մորթի առաջին փուլով նկարագրված ձևին, քանի որ այն համարում են շահեկան:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ երբեմն խաբությունը երկկողմանի բնույթ էր կրում: Այսպես, օրինակ անասնատերերը մթերվող կենդանիներին պահանջվածից ավելի աղ էին տալիս, ստիպելով ծարավը հագեցնելու համար մի քանի անգամ ավելի ջուր խմել, ակնկալելով «ձախ» կիլոգրամներ ու լրացուցիչ եկամուտ:

Ընդհանուր առմամբ մսավաճառի, մսի մթերման գրասենյակների, մսի վերամշակման կոմբինատների նկատմամբ հասարակության վերաբերմունքը հիմնականում բացասական էր, պայմանավորված վերջիններիս վարքագծով: Հանրային այս վերաբերմունքն ու անվստահությունը առկա է նաև այժմ: Ներկայումս ևս անասնատերերը հակված չեն գործ[10] ունենալ այդ կազմակերպությունների հետ: Այս իրողության գիտակցումն առանցքային նշանակություն ունի, ուստի սպանդանոցային պարտադիր մորթի իմպերատիվ (պարդատիր կատարման) պահանջի նախաձեռնության վրա հետագայում և մինչ այժմ ունեցավ վճռորոշ դերակատարություն[11], ինչը ծրագրի պատասխանատուների երկրորդ սերնդի կողմից անտեսված ու հաշվարկված չէր:

Խորհրդային շրջանից ժառանգած այն կարծիքը, թե մսի իրացման շուկայում վճռորոշ դերակատարության պարագայում, կարելի է արագ հարստանալ, իրականում որոշակիորեն «բացասական» ազդեցություն ունեցավ սույն ծրագրում ներգրավված գործարարների համար: Գործարար մարդիկ, նախաձեռնություն ցուցաբերելով, երբեմն հապշտապ, առանց համակողմանի ուսումնասիրության ու գիտական հիմնավորման, հավատալով պետական կառույցների խոստումներին, մեծածավալ ներդրումներով կառուցեցին տարբեր արտադրողական հզորության սպանդանոցներ[12], որոնց մեծ մասը ներկայումս պարտադիր պարապուրդի է մատնված, իսկ մի մասը գոյատևում է ամենօրյա աճող հոգսերի բեռի տակ:

---

[9] Անասնատիրոջ հաշվին պարտադիր զեղջերը վերաբերում էին նաև մորթուն, ենթամթերքներին, գլխին, ոտքերին:

[10] Ազատություն ռադիոկայան՝ https://www.azatutyun.am/a/30742954.html
Ժողովուրդ օրաթերթ՝ https://armlur.am/1029431/, https://armlur.am/961785/
Կենտրոն լրատվական գործակալություն՝ https://kentron.am/am/news/169217

[11] Տարբեր բողոքի ցույցեր, որոնք հաջորդեցին սույն որոշման ընդունմանը:
https://www.youtube.com/watch?v=hk2DzvJI9lw, https://www.aravot.am/2020/01/22/1089538/, https://media.am/hy/critique/2020/01/22/19148/, https://www.azatutyun.am/a/30384674.html

[12] Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի պաշտոնական կայք էջ
https://old.snund.am/%d5%a3%d5%b8%d6%80%d5%ae%d5%b8%d5%b2-%d5%bd%d5%ba%d5%a1%d5%b6%d5%a4%d5%a1%d5%b6%d5%b8%d6%81%d5%b6%d5%a5%d6%80/

«Մարդիկ անում են, ինչի որ հակված են» անառարկելի աքսիոման համարժեք գործողությունների է մղում, ուստի միս արտադրողները՝ անասնատերերը հակված չեն հարաբերություններ ունենալ միս վաճառողների, մթերողների հետ, վերջիններիս համարելով ոչ ազնիվ գործընկեր, համոզմունք ունենալով, որ իրենց շահերը կանտեսվեն: Այս վերաբերմունքը նույնությամբ ասոցացվեց նաև այս վերլուծության առարկա ծրագրի հիմնական առարկայի՝ սպանդանոցների վրա:

Մի ապացույց է նաև այն, որ համաձայն դիտարկումների համեմատաբար շատ գլխաքանակ բուծող ֆիզիկական և իրավաբանական անձինք սեփական տնտեսության կարիքները հոգալու նպատակով կառուցել են սեփական սպանդանոցները, հնարավորինս նվազեցնելու առևտրային հարաբերությունները միս մթերողների հետ: Սա գալիս է ապացուցելու, որ միս վաճառողների մոտ սպանդանոցային գործունեության նկատմամբ գոյություն ունի ամբողջական անվստահություն, որը ժառանգվել է խորհրդային ժամանակներից և դեռևս հաղթահարված չէ:

Բնակչությունը վերջին տարիներին որոշակի զգուշություն է ցուցաբերում, կասկած ունենալով մսի որակի հարցում: Սա դրական շատ կարևոր երևույթ է, և կարող է հիմք հանդիսանալ հետագա քայլերի պլանավորման և ոլորտի բարելավման համար: Առայժմ զգուշությունը հիմնականում դրսևորվում է վստահության հենքի վրա, մշտապես նույն մատակարարից միս գնելով: **Մարդը, անհատը ավելի շատ վստահում է իր մշտական գործընկերոջը, տվյալ դեպքում խանութին, կամ մսավաճառին, ֆիրմային, մի խոսքով՝ իրական, տեսանելի մեկին, քան թե անծանոթ ու անհայտ որևէ համակարգի կամ ծրագրի**: Սեփական ընտրության արդարացիության հիմնական ապացույցն այն է, որ «այստեղ լավ միս են վաճառում և այսքան տարի օգտվում են այս կետից ու դեռ չեն հիվանդացել»:

Ծրագրի իրականացումն ի սկզբանե ունի մի էական խոչընդոտ ևս: Հայաստանի Հանրապետությունում արդեն առկա են մսուրային եղանակով գործող սակավաթիվ անասնապահական ֆերմաներ, սակայն մեր երկրում խոշոր և մանր եղջերավոր կենդանիների բուծումն ավանդաբար ունի արոտային բնույթ: Արոտներում խոշոր եղջերավոր կենդանիները գտնվում են միջին հաշվով վեց, իսկ որոշ մարզերում, բնակլիմայական նպաստավոր պայմանների շնորհիվ, ութ և ավելի ամիսներ:

Ինչ վերաբերում է ոչխարաբուծությանը, ապա այս ճյուղում արոտի տևողությունը 8-12 ամիս է, կապված աշխարհագրական դիրքի հետ: Արոտային պայմաններն ու սպանդանոցում իրականացվող մորթը համակցելը մեր պայմաններում ներկայումս անհնար է: Որոշ արոտավայրեր ամենամոտ բնակավայրերից գտնվում են 30, 40 և ավելի կիլոմետր հեռավորության վրա, ճանապարհների դժվարանցանելի լոգիստիկ հնարավորությամբ:

Անասնատերերի մոտ տրամաբանական օբյեկտիվ հարց է առաջանում, թե ինչու՞ մսուրային շրջանում մորթը բացառապես իրականացվելու սպանդանոցում, երբ արոտավայրում սպանդանոցը պարտադիր պայման չէ: Այս հարցի լուծման նպատակով հետագայում կառավարությունը ընդունեց մոբիլ սպանդանոցներ ունենանալու առաջարկը, բայց սա նույնպես ձախողվեց շուկայական աննպատակահարմարության պատճառով:

Վերլուծությունը հանգեցնում է այն եզրակացությանը, թե մեր հանրության լայն շրջանակների համար սպանդանոցային պարտադիր մորթի անցումը դեռևս իրական պահանջ չէ, նման պահանջարկ չի ձևավորվել, ուստի դեռ վաղ է ակնկալել վճռորոշ հանրային աջակցություն:

Ամփոփելով հիմնական մասնակիցների մեկնարկային հակումներն ու հետաքրքրություններն ակնհայտ է, որ

1) միս արտադրողները՝ անասնատերերը, հետաքրքրված չեն անցում կատարելու սպանադանոցային մորթին,
2) սպանդանոցային գործունեությունը, որպես բիզնեսի լուրջ ոլորտ, ֆորմալ բնույթ է կրում, համախմբված ամուր կառույց չէ, անգամ իր մասին տարածված վատ համբավի չեզոքացման նպատակով որևէ ծրագրի ու միջոցառման մասին չի հայտարարվել,
3) հանրությունն անտարբեր է այս ծրագրի նկատմամբ այն պատշաճ մակարդակով չմատուցելու պատճառով, որի արդյունքում ընդգծված պահանջ չկա սպանդանոցային մորթի անցնելու հարցում:

Սա է սպանդանոցային պարտադիր մորթի անցում կատարելու ծրագրի շահառու մասնակիցների մեկնարկային դիրքորոշման ամփոփ պատկերը:

Այնինչ պետական մարմինների կողմից ձեռնարկվեցին վերը նշված հանգամանքներն անտեսող մարտավարություն, որը բնականաբար որևէ դրական արդյունք չունեցավ, առավել ևս նսեմացրեց սպանդանոցային մորթի գաղափարը:

3. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿԱԾ ՔԱՅԼԵՐԻ ՈՒ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՀ ամբողջ տարածքում սպանդանոցային մորթին անցում կատարելու նպատակով պետական մարմինների ձեռնարկած քայլերն ու գործողությունները մարտավարական առումով բաժանվում են իրարամերժ երկու փուլերի, որոնք բովանդակային առումով դիտարկելի են որպես տարբեր էտապներ: Անհասկանալի պատճառներով առաջին փուլում ձեռնարկած քայլերի մերժման և երկրորդ սերնդի նոր մարտավարության անցում կատարելու անհրաժեշտությունը հիմնավորող կարծիքի, ուսումնասիրության, կամ հետազոտության որևէ փորձ չի իրականացվել:

Ստորև հակիրճ ներկայացված են այդ երկու փուլերը/էտապները, ժամանակագրական հաջորդականությամբ:

3.1. Մարտավարական պայմանական առաջին փուլ

Պայմանական առաջին փուլի մեկնարկը տրվել է 2013թ.: Ժառանգվել էր մսի ամբողջական արտադրական շղթան բարեփոխելու և կարգավորելու անհրաժեշտություն: Կարևոր հանգամանք էր այն, որ Մերձավոր Արևելքի երկրներում մեծանում էր հետաքրքրությունն ու պահանջարկը Հայաստանի Հանրապետությունում բուծվող կենդանիների մսի նկատմամբ, որի սպանդանոցային ծագում ունենալու մասին գրավոր հավաստումը կարող էր ենթադրել շուկայի ընդլայնում:

Խնդրի լուծման նպատակով 2013-14 թթ. ՀՀ գյուղատնտեսության նախարարության նախաձեռնությամբ, Հունաստանի կառավարության ֆինանսավորմամբ մեկնարկում է «Աջակցություն Հայաստանում սպանդանոցների զարգացմանը[13]» ՊԳԿ-ի պիլոտային ծրագիրը, որի շրջանակներում կառուցվում է հինգ տիպային սպանդանոց: Սպանդանոցների տարածքների ձեռքբերումը և շինարարական աշխատանքներն իրականացնում են ծրագրում ներգրավված գործարարները, իսկ անհրաժեշտ սարքավորումները տրամադրում է դոնորը: Սպանդանոցները շահագործվեցին 2015 թ.:

Տեղական և օտարերկյա կապիտալի ներդրմամբ Մասիս քաղաքում կառուցվեց տիպային սպանդանոց[14] «Հալալ» սերտիֆիկացման կարգավիճակով, մեկնարկում՝ գերազանցապես Իրանի Իսլամական Հանրապետություն ոչխարի միս արտահանելու նպատակով[15]: Այստեղ մսագործները՝ ղասաբները պարտադիր իրանցիներ են, գործիքները՝ դանակները, սրոցները, և այլն նույնպես իրանական են:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության տարբեր շրջաններում և մայրաքաղաք Երևանում պահպանվել էր խորհրդային տարիներին կառուցած, կիսավեր մի քանի սպանդանոց, որոնք հիմնականում չէին գործում, քանի որ հատկապես սպանդանոցային մսի պահանջ և պահանջարկ չկար:

---

[13] ՀՀ գյուղատնետսության նախարարության պաշտոնական կայք էջ http://old.minagro.am/2014/11/%d5%b0%d5%b0-%d5%a3%d5%b5%d5%b8%d6%82%d5%b2%d5%a1%d5%bf%d5%b6%d5%bf%d5%a5%d5%bd%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%a1%d5%b6-%d5%b6%d5%a1%d5%ad%d5%a1%d6%80%d5%a1%d6%80%d5%a8-%d5%b0%d5%a1%d5%b6%d5%a4%d5%ab-3/

[14] ՀՀ գյուղատնետսության նխարարության պաշտոնական կայք էջ http://old.minagro.am/2015/11/%d5%b0%d5%b0-%d5%a3%d5%b5%d5%b8%d6%82%d5%b2%d5%a1%d5%bf%d5%b6%d5%bf%d5%a5%d5%bd%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%a1%d5%b6-%d5%b6%d5%a1%d5%ad%d5%a1%d6%80%d5%a1%d6%80%d5%b6-%d5%a1%d6%80%d5%a1%d6%80%d5%a1-3/

[15] Այս սպանդանոցը ևս ներկայումս չի գործում:

Վերը նշված սպանդանոցների շահագործմանը զուգընթաց 2015 թ. սեպտեմբերին ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ՀՀ կառավարությունն է ներկայացվում *«Հայաստանի Հանրապետությունում 2016–2020 թվականներին սպանդանոցների զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին»* արձանագրային որոշման նախագիծը, որը հաստատվում է նույն թվականի դեկտեմբերին:

Սույն ռազմավարական ծրագրի պատասխանատուները որդեգրել էին առանց ցնցումների, համադրելով արժեշղթայի բոլոր կողմերի շահերն ու հետաքրքրություններն աստիճանական անցում կատարելու շնորհիվ հասնել ձևակերպած նպատակին: Այսինք, այստեղ կարևորը խրախուսելն էր, խրախուսել սպանդանոց կառուցողին, միս արտադրողին, միս գնողին, միս վերամշակողին: Այս պայմանական փուլը կարող ենք **անվանել խրախուսման փուլ**:

Ռազմավարական նպատակին հասնելու համար առաջադրված էին հետևյալ գործողությունները՝ ձևավորել սպանդանոցների[16] գործունեությունը կարգավորող իրավական դաշտը, զարգացնել սպանդանոցները սպասարկող անձնակազմի ունակությունները, արդյունավետ կառավարման համար տեխնիկական աջակցություն ցուցաբերել սպանդանոցները կառավարողներին, խթանել «համայնքային փոքրածավալ սպանդանոցների» կառուցմանը, սահմանել սպանդանոցների համար հարկային արտոնություններ, վերազինել գոյություն ունեցող չօգտագործվող սպանդանոցները, իրազեկել հանրությանը տարբեր զանգվածային լրատվամիջոցների օգնությամբ, բարձրացնել պետական գնման գործընթացներում սպանդանոցների դերակատարությունը, աջակցել սպանդանոցային գործունեությամբ զբաղվողների շահերի ու իրավունքների պաշտպանության նպատակով հասարակական կազմակերպությունների ստեղծմանը, կենդանական ծագման կողմնակի արտադրանքի օգտագործումը խրախուսող մեխանիզմների ներդնումը[17]:

Համաձայն ծրագրի, «համայնքային փոքրածավալ սպանդանոցները» համայնքի ղեկավարության կողմից հատկացրած, խմելու մշտական ջրով ապահովված, ցանկապատված տարածքներ են, որքոնք հատկացված են կենդանիների մորթի համար: Իրականում նման, այսպես կոչված «համայնքային փոքրածավալ սպանդանոցների» գոյությունը միջանկյալ քայլ էր ամեն մի բակից «սահմանված» տեղում մորթ կատարելու անցման համար: Համայնքի առանձնահատկություններով պայմանավորված «համայնքային փոքրածավալ սպանդանոցը» կարող է լինել որևէ թաղամասում, անասնաֆերմայի հարակից տարածքում և այլուր: Այս ձևով լուծվում է կենդանիների սպանդը բակից սահմանված վայրում իրականացնելու սովորույթի խնդիրը, ինչպես նաև անասնաբուժական փորձաքննական վերահսկողության համար ստեղծում է իրական հնարավորություն[18]: Ավելորդ չէ նշել, որ շատ հաճախ նախասպանդային անասնաբուժական զննում չի իրականացվում, քանի որ շատ հաճախ առավել շուտ մորթվում է կենդանին, նոր դիմում են անասնաբույժի, ինչի պատճառով էլ մորթը կատարվում է առանց կենդանիներին զննելու, իսկ ուղեկցող փաստաթղթերը կարող են նաև չլինել, քանի որ մսի իրացման շուկայում նրանց առկայությունը որևէ խնդիր չի լուծում:

Կարևոր է նշել, որ համաձայն սույն ծրագրի՝ «Ռազմավարության[19] իրականացման առաջին փուլում կիրականացվեր սպանդանոցների գրանցում, որոնք պետք է բավարար էին մսի արտադրողների հասանելիության անհրաժեշտ պահանջարկը, արտադրական ծավալներն ու

---

[16] Մեջբերում է նշված ռազմավարական ծրագրից:

[17] Մեջբերված է «ՀՀ 2016–2020թթ. սպանդանոցների զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» արձանագրային որոշումից:

[18] Քիչ չեն դեպքերը, երբ կենդանու սպանդն ու ուղեկցող փաստաթուղթի տրամադրումը չեն իրականացվում համաձայն գործող ընթացակարգերի: Դժբախտաբար այս գործելաոճը առկա է նաև ներկայումս, ինչը խոչընդոտ է համատարած սպանդանոցային մորթի անցում կատարելու գործում:

[19] Մեջբերված է «ՀՀ 2016–2020թթ. սպանդանոցների զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» արձանագրային որոշումից

հզորությունները, ինչպես նաև նրանց հավասարաչափ տրամաբանված տեղաբաշխվածությունը ամբողջ երկրի տարածքում:

Երկրորդ փուլում նախատեսում էր մշակել ոլորտը կարգավորող նորմատիվային ակտեր՝ սպանդանոցների հավատարմագրման, հաշվետվությունների տրամադրման, գրանցամատյանների կիրառման և այլնի վերաբերյալ:

Սակայն, ՀՀ կառավարության սույն որոշման պահանջները կատարելու փոխարեն, ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական տեսչության կողմից նախաձեռնվում է բովանդակային առումով հակոտնյա մի նախաձեռնություն, որի վերաբերյալ ներկայացվում է ստորև և անվանվում է «մարտավարական պայմանական երկրորդ փուլ» ձևակերպմամբ:

3.2. Մարտավարական պայմանական երկրորդ փուլ

Մարտավարական պայմանական առաջին փուլում նկարագրված ՀՀ կառավարության արձանագրային որոշման գործունեության ժամկետը ամփոփում էր 2016-2020 թվականները, այնինչ ծրագրի մեկնարկից ամիսներ անց՝ 2016 թվականին, ՀՀ ԳՆ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը նախաձեռնում է մեկ այլ գործընթաց, որը ենթադրում է հանրապետության ամբողջ տարածքում կարճ ժամկետում համատարած անցնել սպանդանոցային մորթի պրակտիկային: 2016 թ. սեպտեմբերին ներկայացվում է *«Պարտադիր սպանդանոցային մորթի կիրառման ոլորտները և ժամանակացույցը սահմանելու մասին»*[20] Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ, որը ուժի մեջ է մտնում 09.03.2017 թվականին: Պայմանական երկրորդ՝ սույն փուլում հաջողելու միակ գործիքը՝ արգելելն է, ուստի **այն անվանենք «արգելանքի փուլ»:**

Այս որոշման Հավելվածի համաձայն պետական գնումներով տեղական սպանդանոցային ծագման մսի ձեռքբերումը, մսամթերքի արտադրությունը (տեղական սպանդանոցային ծագման միս օգտագործելու դեպքում), հանրային սնունդը (տեղական սպանդանոցային ծագման միս օգտագործելու դեպքում), տեղական սպանդանոցային ծագման մսի արտահանման վերջնաժամկետ է սահմանվում 2017 թ. օգոստոսի 1-ը: Հարկ է նշել, որ քանի որ պետական պատասխանատու մարմինները ոչ մի կերպ չեն հաջողել սույն որոշման պահանջի կատարման մասով, ուստի ստիպված են եղել այս որոշումը քանիցս ենթարկել փոփոխության, համաձայն որոնց ժամկետները փոփոխվել են՝ 2019 թ. հունվարի 1, ապա՝ 2020 թ. հունիսի 30, և այսպես գրեթե կես տարին մեկ, հասնելով 2022 թ. դեկտեմբերի 31-ին:

Հետագայում, 2017 թ. սեպտեմբերի 11-ին Հայաստանի Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնը (Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ), ՀՀ ԳՆ Սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը (ՀՀ ԳՆ ՍԱՊԾ) և «Տնտեսական հետազոտությունների և զարգացման աջակցության կենտրոն» հասարակական կազմակերպությունը (ՏՀԶԱԿ) ստորագրում են համապատասխան հուշագիր և ազդարարում Հայաստանում սպանդանոցների ստեղծման ծրագրի մեկնարկը[21]:

Իսկ 2017 թ. դեկտեմբերի 28-ին ՀՀ կառավարությունն ընդունում է *«Անհատույց օգտագործման իրավունքով անշարժ գույք հանձնելու մասին»* N 1731-Ա որոշումը, համաձայն որի Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության

---

[20] «Պարտադիր սպանդանոցային մորթի կիրառման ոլորտները եվ ժամանակացույցը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության որոշում՝ http://old.minagro.am/public/uploads/2017/03/10-6ardz.voroshum17.pdf

[21] https://news.am/arm/news/409304.html

գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ենթակայության «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը պատկանող անասնաբուժական սպասարկման կենտրոնների շենքերը և դրանց կից շինությունները (այսուհետև՝ անշարժ գույք) հետ վերցնել և 25 տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Հայաստանի Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի «Աջակցություն սկսնակ ձեռներեցներին» ծրագրի հատուկ դասընթացի արդյունքում հավանության արժանացած գործարար ծրագրերի շահառուներին (այսուհետև՝ շահառուներ)՝ համաձայն N 1 հավելվածի, շահառուների կողմից ներկայացված գործարար ծրագրերի համաձայն՝ սպանդանոցներ շահագործելու նպատակով:

Այս ծրագիրն իրականացվում է ՀՀ ՓՄՁԶԱԿ[22]-ի կողմից, որն ընտրում է սպանդանոցներ կառուցելու և գործարկելու մեջ հետաքրքրված գործարարների, վերապատրաստման կուրսեր է անցկացնում վերջիններիս համար, որոնք ներկայացնում են բիզնես ծրագրեր, նույն ՓՄՁԶԱԿ-ը գնահատում է և հաղթող յոթ գործարարները դառնում են արդեն սույն ծրագրի շահառուներ, որոնց էլ բաժին են հասնում այդ անասնաբուժական սպասարկման կենտրոնները:

Սպանդանոցային մորթի հիմնական նպատակն առողջ միս, մսամթերք, ենթամթերքներ ստանալն է, այսպես է ամբողջ աշխարհում և հատկապես «առողջ» բառի համատեքստում, կարևոր հարց է ծագում, թե որտե՞ղ է կառուցվում սպանդանոցը: Այնինչ՝ «*Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թ. դեկտեմբերի 28-ի N 1731-Ա որոշման*» համաձայն, հավանության արժանացած յոթ գործարար շահառուներին են հանձնվում «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը պատկանող անասնաբուժական սպասարկման կենտրոնների 380472190 դրամ ընդհանուր արժողությամբ շենքերն ու դրանց կից շինությունները:

Անասնաբուժական սպասարկման կենտրոններն ու նրանց տարածքում գործող անասնաբուժական լաբորատորիաները այն շինություններն են, որտեղ, որոշ դեպքերում շուրջ 70-80 տարի, ամենօրյա ռեժիմով, անասնաբուժական աշխատակազմը գործ է ունեցել վարակիչ և ոչ վարակիչ հիվանդություններ կրող կենդանիների հետ, իրականացվել են լաբորատոր ախտորոշիչ միջոցառումներ, դիահերձումներ, իսկ որոշ լաբորատորիաներին կից գործում էին վիվարիումներ, որտեղ պահվող տարբեր ցեղատեսակի կենդանիներին ներարկվում էին տարբեր ախտածիններ:

Ընդ որում, այս շենքերին կից գործել են Բեկարի հորեր[23], որոնց գոյությունն իսկ առողջ միս, մսամթերք, ենթամթերքներ ստանալու համատեքստում ի լրումն վերը նշվածի, ակնհայտ կենսաբանական սպառնալիք է:

Ինչպիսի՞ն կլինի ներքին և արտաքին շուկաների արձագանքը, երբ պարզ դառնա , որ այն միսը, մսամթերքը, որը տվյալ սպանդանոցի տերերը պետք է առաջարկեն պոտենցիալ հաճախորդներին ստացվել է հիվանդությունների դեմ շուրջ 70-80 տարի ամենօրյա ռեժիմով աշխատող շենքերի տարածքներում, ո՞վ կգնի նման միս: Ի՞նչ կլինի, երբ ՀՀ-ից միս արտահանողների մրցակիցները այս փաստը շահարկեն:

---

[22] https://smednc.am/hy/inner/553

[23] Սա միջազգային ստանդարտներով կառուցված հոր է, որտեղ են նետվում հիվանդ կենդանիների դիահերձումների, լաբորատոր աշխատանքների ընթացքում ձևավորվող ախտաբանական նյութերը: Սանիտարական նորմերի համաձայն արգելվում է նման կառույցների տարածքում որևէ քաղաքաշինական գործունեություն ծավալել:

Համաձայն ծրագրի, շահառուները պարտավորվում են ընդհանուր առմամբ 198,9 մլն դրամ ներդրում անել: Տեղեկացված են արդյոք այն յոթ շահառուները, որ իրենք ներդրում են կատարում «ոչ առողջ» տարածքներում և ի՞նչ բիզնես ռիսկեր են իրենց սպառնում:

Անչափ տարօրինակ է այն հանգամանքը, որ սննդամթերքի անվտանգության ապահովման երաշխավոր հանդիսացող Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինն է այս նախաձեռնության հեղինակը:

Այնուհետ 2017 թ. հոկտեմբերի 16-ին ՀՀ Ազգային ժողովում քննարկման է ներկայացվում[24] *«Վարչական իրավախախտումների մասին»* օրենսգրքում, *«Սննդամթերքի անվտանգության մասին»*, *«Անասնաբուժության մասին»* օրենքներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին օրինագծերի փաթեթները, որի նպատակը պարտադիր սպանդային մորթի իրականացման համար իրավական հիմքեր ապահովելն ու հստակեցնելն է:

Ընդ որում, որևէ կերպ, որևէ արդյունք արձանագրելու անհուսալիությունից դրդված 2023 թ. փետրվարի 2–ին շրջանառության մեջ դրվեց *«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. հունիսի 29-ի N 993-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»* որոշման նախագիծ, որի 17.1. կետի համաձայն՝ *«Սպանդանոցները պետք է ապահովված լինեն անընդմեջ և բարձր որակի տեսաձայնագրություն իրականացնող տեսահսկման համակարգերով՝ նկարահանելու և տեսաձայնագրությունն առնվազն 10 օր պահպանելու հնարավորությամբ: Տեսահսկման համակարգերի պարտադիր կահավորումը իրականացնել սպանդի սրահը ամբողջությամբ տեսանկարահանելու հնարավորությամբ, որը Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնին ամենօրյա 24-ժամյա իրական ժամանակի ռեժիմով հասանելիություն կապահովի նշված պարտադիր տեսահսկման համակարգերին»:*

Չնայած այս պահանջը ներկայումս լեգալ է, սակայն լեգիտիմ չէ, քանի որ հակասում է գործարար գաղտնիքի պահպանման սկզբունքին: Նույն նախագծով առաջարկվում է սպանդանոցների գործունեության կասեցում, եթե ներկայացվող պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ են հայտնաբերվել, կամ սպանդանոցների գործունեությունը դադարեցվում է առավելագույնը 6 ամիս սպանդանոցային գործունեություն չիրականացնելու դեպքում:

Սա է պատկան մարմինների պատկերացումները սպանդանոցների ցանց ստեղծելու և, որպես արդյունք, բնակչությանը անվտանգ միս ու մսամթերք մատակարելու վերաբերյալ:

Այսինքն, սույն վերլուծության մեջ նշված պատճառներով արդեն այնքան են շատացել սպանդանոցները չաշխատացնողների քանակը, որ ստիպված են պարտադրանքի ուժ կիրառել:

Ավելին, նույն որոշման նախագծով նախատեսված է օրենսդրության պահանջներին ակնհայտորեն հակասող, անհեթեթ մի առաջարկություն՝ *«Տեղական ինքնակառավարման մարմինների մասին»* ՀՀ օրենքում կատարել համապատասխան փոփոխություն, համաձայն որի, «Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով. «տեղական ինքնակառավարման մարմիններն ապահովում են սպանդի ոչ ենթակա, չախտորոշված հիվանդությամբ հիվանդ, անկած կամ հոգևարքի վիճակում գտնվող կենդանիների, բնակչության կողմից սպառման համար չնախատեսված սպանդից գոյացած կենդանական ծագման արտադրանքի ոչնչացման համար տարածքի տրամադրումը»:

[24] Panorama.am՝ https://www.panorama.am/am/news/2017/10/26/%D6%85%D6%80%D5%A5%D5%B6%D6%84-%D4%B1%D4%BA/1855967

Արդյոք դա ՏԻՄ-ի անելիքն է, չի՞ հակասում արդյոք ՀՀ Սահմանադրությանը, ինչո՞ւ պիտի տարածք տրամադրի, ի՞նչ հիմունքներով, անվճար, թե՞ վճարովի, իսկ ո՞վ պիտի վճարի, որտե՞ղ տրամադրի, ո՞վ է տեղազննում կատարելու, ո՞վ է հսկելու, ի՞նչ ժամկետներում, ինչպե՞ս է նշագրվելու, ո՞վ է թաղումը կատարելու և այսպես շարունակ: Սրանք հարցեր են, որոնց շուրջ սույն նախաձեռնության հեղինակները պետք է երկար մտածեին, եթե ինքնուրույն չեն կարողանում պատասխանել, ականջալուր լինեին մասնագիտական կարծիքին:

Այսինքն՝ եթե առաջնորդվենք ՏԻՄ մասին օրենքում սույն փոփոխության հեղինակների տրամաբանությամբ, ապա ամբողջ երկիրը պետք է դարձնենք «կենսաբանական ռումբ» հիշեցնող տարածք, քանի որ համայնքի ղեկավարները սեփական տրամաբանությամբ մեկ այստեղ, մեկ մյուս վայրում կենդանիներին թաղելու տարածքներ են տրամադրելու և այն էլ «չախտորոշված հիվանդությամբ անկած» կենդանիներին թաղելու համար:

Կենդանիների թաղման վայրերը կոչվում են անասնագերեզմանոցներ, որոնց նկատմամբ առկա են շատ խիստ քաղաքաշինական, սանիտարական, հսկողական, համաճարակաբանական, հողահատկացման, գեոդեզիական նորմեր ու կանոններ:

Ուզում ենք հիշեցնել, որ հիվանդությունների վարակիչ լինելու հանգամանքը պայմանավորված է նաև նրանով, որ այն օժտված են արագ տարածվելու ունակությամբ: Ինչից հետևություն, որ սա համայնքում կատարվող, բայց ոչ համայնքային նշանակության խնդիր է: Քանի որ մեկ համայնքում արձանագրված վարակիչ որևէ հիվանդություն շատ արագ հայտնվելու է մեկ այլ համայնքում և այդպես շարունակ, դառնալով պետական նշանակության խնդիր: Որից հետևություն, որ ներկայիս տեղական ինքնակառավարման մարմինները անկարող են արդյունավետ պայքարել վարակիչ հիվանդությունների դեմ, ուստի այս բովանդակությամբ որոշման նախաձեռնողները ուղղակիորեն մեր երկրի կառավորումն ուղղորդում են անկառավարելի իրավիճակների:

2018 թ. հուլիսի 19-ին հաստատվում է *«Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին»* ՀՀ Կառավարության N 893-Լ որոշումը, որից շուրջ 90 սպանդանոց[25] կառուցող գործարարներից շատերը օգտվել են: Որոշումից անարգել օգտվելու, ինչպես նաև սպանդանոց կառուցելու խնդիրը հեշտացնելու նպատակով ՀՀ էկոնոմիակայի նախարարությունը մշակել և հանրայնացրել է «Սպանդանոցների[26] կառուցման ուղեցույցը», ինչը գործում է մինչ այժմ:

Սա ևս բեռ է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, քանի որ մինչ այդմ սպանդանոցային համատարած և պարտադիր մորթի անցում կատարելու ուղղությամբ պատկան մարմինների կողմից կատարված գործողություններն ու քայլերը որևէ դրական արդյունք չեն արձանագրել, ո՞րն է տրամաբանությունը ևս մի քանի հարյուր միլիոն դրամ լրացուցիչ ծախսելու նպատակը: Չնայած պետական բյուջեից կատարված ահռելի ծախսերին, այնուամենայնիվ որպես այդպիսին գործող սպանդանոցային ցանց դեռևս չկա, իսկ միս արտադրող անասնապահական «ինդուստրիայի» և մեր երկրի բնակչության սպասելիքները որևէ կերպ չեն արդարացվել:

Ինչ վերաբերում է սպանդանոցների քանակին և ընդգրկվածությանը, ապա էկոնոմիայի նախարարության, «Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի», մարզպետարանների կողմից տարբեր ժամանակահատվածներում հրապարակվել են

---

[25] ՀՀ ՍԱՏՄ պաշտոնական կայք էջ՝ https://old.snund.am/%d5%a3%d5%b8%d6%80%d5%ae%d5%b8%d5%b2-%d5%bd%d5%ba%d5%a1%d5%b6%d5%a4%d5%a1%d5%b6%d5%b8%d6%81%d5%b6%d5%a5%d6%80/

[26] ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայք էջ՝ https://mineconomy.am/media/10626/Spandanoc.pdf

իրարամերժ տարբեր տվյալներ, որոնց վերաբերյալ քիչ չեն ՁԼՄ-երի[27] քննադատական արձագանքները:

Խուսափելով կամ միգուցե չգիտակցելով սեփական ձախողման իրական պատճառները 2020 թ. հունվարին ՍԱՏՄ-ն նախաձեռնում է իրավական առումով անհասկանալի մի գործընթաց, որի համաձայն, վերջինս սահմանում է սպանդանոցային ծառայությունների մատուցման դիմաց գանձվող գումարների չափերը:

ՍԱՏՄ-ի գործունեությունը կարգավորող կանոնադրության որևէ կետում, վերջինիս գնագոյացման լիազորությունները վերապահված չէ, ի՞նչ է ընկած նման վարքագծի հիմքում՝ անհասկանալի է:

Կրկին անգամ ուզում ենք հիշեցնել, որ որևէ ուսումնասիրության, հետազոտության, մարտավարական առաջին փուլով պայմանավորված գործողությունների մոնիթորինգի և նրանց արդյունքների մասին որևէ հրապարակման, հոդված, հաշվետվություն զետեղված չէ պետական մարմինների պաշտոնական կայք էջերում, ինչը կհիմնավորեր առաջին մարտավարական «խրախուսող» փուլից երկրորդ «արգելող» փուլին անցում կատարելը:

Ինչով բացատրել ծրագրի առաջին փուլը մերժողների և երկրորդ փուլը նախաձեռնողների այն վճռականանությունն ու վստահությունը, որ հանրային միջոցներն ու պատկան մարմինների ջանքերը անվերապահորեն հասանելի կդարձնեն սահմանված նպատակը, անհասկանալի է մինչ այժմ:

Մի քանի տեսանկյուններից դիտարկենք 2016 թվականին մեկնարկած պետական մարմինների կողմից նախաձեռնած և ամբողջական ձախողման ենթարկված այսպես կոչված զարգացման սույն միջամտությունը: Առաջին հերթին կատարված ծախսերի, հանրության և անասնապահության բնագավառի սպասելիքների և արձանագրված արդյունքների մասով:

[27] Առավոտ օրաթերթ «Հայաստանի սպանդանոցների տեղաբաշխվածությունը ըստ մարզերի» https://www.aravot.am/2020/06/02/1115030/

4. ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ինչպիսի՞ իրավիճակ ենք արձանագրում սպանդանոցային մորթին համատարած անցում կատարելու պետական մարմինների ձեռնարկած քայլերի, գործողությունների արդյունքում: Ի՞նչ ստացավ երկիրը նման մեծածավալ ներդրումների ու ջանքերի դիմաց: Ո՞ւր է հանրային, կամ պետական, կամ բիզնես շահը:

Նշենք, որ վերը նկարագրված ամբողջ գործընթացն իրականացվել է ՀՀ պետական բյուջեի, այսինքն հարկատուների հաշվին, բացառությամբ Հունաստանի Հանրապետության կառավարության միջոցներով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից նախաձեռնած, 2013 թ. մեկնարկած ՊԳԿ[28]-ի իրականացրած հինգ սպանդանոցների կառուցման ծրագրի, որի մասին ներկայացվել է վերևում:

Մինչև այժմ տարբեր մասնակիցների կատարած ծախսերի, շահառու խմբերի սպասելիքների առումով այս փուլում հարկ է անդրադառնալ պետական վարչական ապարատի ծախսերին, բիզնես ներդրումներին, հանրային, անասնապահական «ինդուստրիայի», ներքին և արտաքին շուկաներում միս-մսամթերք իրացնողների սպասելիքներին: Անդրադարձ կատարել նաև սպանդանոցների գործունեության շնորհիվ հավելյալ ապրանքներ ստանալու պոտնեցիալ հնարավորությանը:

4.1. Վարչարարական ծախսեր

ՀՀ պետական փաստաթղթերի շրջանառությունն իրականացվում է Mulberry համակարգի միջոցով, ինչը ենթադրում է աստիճանակարգային փոխկապակցված ընթացակարգ:

Այսինքն՝ որևէ նախաձեռնություն, որը հավակնում է կառավարության որոշման կամ օրենքի կարգավիճակ ստանալ գործի է դնում պետական գրեթե ամբողջ վարչական ապարատը: Այդպիսի փաստաթղթի ծնունդը մեկնարկում է, կամ վերադասի հանձնարարությամբ, կամ աշխատակցի անձնական նախաձեռնությամբ: Անկախ այն հանգամանքից, փաստաթղթի մշակումը ինչով է պայմանավորված դրա շրջանառությունն ապահովող գործընթացները նույն են:

Ընդունենք, որ սպանդանոցային պարտադիր մորթին անցում կատարելու հանձնարարությունը տվել է նախարարը ոլորտը համակարգող իր տեղակալին: Տեղակալը համապատասխան վարչության ղեկավարին, վերջինս՝ բաժնի պետին, բաժնի պետը՝ աշխատակցին, ով պետք է միայնակ կամ այլ մասնագետների ներգրավմամբ, սահմանված ժամկետում մշակի և նույն ընթացակարգով՝ արդեն հակառակ ուղղությամբ կատարողից-նախարար համապատասխան հաստատման ներկայացնի հանձնարարականի պահանջը:

Հանձնարարության հեղինակը նույն՝ աստիճանական ընթացակարգով աշխատակազմի գլխավոր քարտուղարի միջոցով գերատեսչության շահագրգիռ ստորաբաժանումների քննարկմանն է ուղարկում փաստաթղթի նախագիծը և որոշ ժամանակ անց ստանում վերջիններիս կարծիքը, առարկություններն ու դիտողությունները, եթե այդպիսիք կան:

Առկայության պարագայում, նույն ընթացակարգով դրանք հասցեագրվում են մշակող աշխատակցին, որը կատարում է համապատասխան շտկումներ: Այնուհետև, կրկին նույն

[28] Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն

ընթացակարգով վերամշակված փաստաթուղթը ուղարկվում է շահագրգիռ գերատեսչություններին՝ այն է՝ առողջապահության, ֆինանսների, արդարադատության, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, շրջակա միջավայրի նախարարություններին:

Այստեղ նույն ընթացակարգով այսինքն՝ նախարարից մինչև աշխատակից աստիճանական կարգով, ձևավորվում են առաջարկություններ, դիտողություններ կամ նկատառումներ և կրկին նույն ընթացակարգով նախագիծը վերադարձվում է նախաձեռնած նախարարության աշխատակցին: Վերջինս կատարում է համապատասխան փոփոխություններ և նույն կերպ նախագիծը փոխանցվում է ՀՀ վարչապետի աշխատակազմ, որտեղ համապատասխան ստորաբաժանումները կրկին նույն ընթացակարգով ներկայացնում են իրենց դիրքորոշումը, որը կարող է վերադառնալ մշակող աշխատակցին, կրկնելով շրջանառությունը:

Այնուհետև, վերամշակված և վերջնական տեսք ստացած նախագիծը քննարկվում է Ֆինկոմիտեի նիստում, որին մասնակցում են նախաձեռնության հեղինակ գերատեսչության ղեկավարի տեղակալը և շահագրգիռ կառույցների կոլեգաները: Վերջիններիս հավանությանն արժանանալու դեպքում ներկայացվում է ՀՀ կառավարության աշխատակազմ՝ համապատասխան հաստատման, իսկ եթե դա օրենքի նախագիծ է նաև Ազգային ժողովի աշխատակազմ:

Նման երկար ու բարակ նկարագրության նպատակը ընթերցողին ներկայացնելն է, թե որքան աշխատանք և ժամանակ է ծախսվում յուրաքանչյուր փաստաթղթի մշակման ու հետագա հաստատման համար: Սա աշխատավարձ է, շենք է, կահույք է, ինտերնետ է, հեռախոսային ծառայություններ են, տրանսպորտ է, էլ. հոսանք է և բազում այլ ծախսեր: Նման մի նախագծի մեկնարկից մինչև հաստատում, միջինում, եթե հրատապության ռեժիմ չի սահմանված, անհրաժեշտ է 120-150 աշխատանքային օր, ներգրավելով 90-120 պաշտոնյա: Այսինքն, անկախ շրջանառվող փաստաթղթի բովանդակությունից, նրան պարտադիր անդրադառնում են զգալի թվով պետական գերատեսչություններ և վերջիններիս աշխատակիցներ:

Այնուհետ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կարգավիճակ ստանալուց հետո, սույն վերլուծության առարկա հանդիսացող սպանդանոցային պարտադիր մորթին անցում կատարելու պահանջի իրականացման աշխատանքներին ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ՍԱՏՄ աշխատակազմերին միանում են մարզպետարանները և համայնքները:

Վերջիններս հանդիպումներ են կազմակերպում սպանդանոցային մորթի արժեշղթայի տարբեր մասնակիցների հետ, քաղաքաշինական, հողահատկացման, ենթակառուցվածքների ապահովման, ֆերմերների շրջանում ագիտացիոն և այլ բնույթի աշխատանքներ իրականացնում: Այս ամենից բխելով մշակվում և ներկայացվում են տարաբնույթ հաշվետվություններ, հավաքագրում են վիճակագրական տվյալներ:

Ի լրումն վերը նկարագրված բյուջետային ծախսերի ու պայմանավորված լինելով այն հանգամանքով, որ սույն որոշումը, ինչպես ներկայացվեց վերևում, առաջացրեց հուզումներ ու բողոքի ցույցեր, ուստի հանրային կարգի պահպանության նպատակով, ներգրավվում են մեծաքանակ ոստիկանական ուժեր, որոնք ևս ֆինանսավորվում են ՀՀ պետական բյուջեից: Հարկ է նշել, որ իրավապահ համակարգի կողմից ձեռնարկած միջոցառումներում[29] ներգրավված էին մեծ թվով ոստիկաններ, իսկ բողոքի ակցիաները շարունակվեցին տևական ժամանակ, ինչը ենթադրում է ահռելի ծախսեր:

[29] https://www.shantnews.am/news/view/580932.html

ՀՀ Ազգային ժողովը ևս, իրավիճակով պայմանավորված քանիցս, հանդիպումներ և քննարկումներ է կազմակերպել, ծախսելով ադմինիստրատիվ միջոցներ ու ռեսուրսներ, ինչը նույնպես իրականացվում է հանրային միջոցների հաշվին:

Թե քանի նման միջոցառումներ են կայացել պետական մարմինների պաշտոնատար անձանց և սպանդանոցային մորթի արժեշղթայի տարբեր մասնակիցների միջև՝ դժվար է ասել:

Բնական հարց է առաջանում. սահմանված նպատակի տեսանկյունից ի՞նչ արդյունք է արձանագրվել նախագիծն իրականացվելու արդյունքում պետական տարբեր գերատեսչությունների, համայնքային աշխատակիցների կողմից պետական բյուջեի հաշվին այսչափ մեծ ու ծավալուն ջանքերի ու միջոցների ներդրմամբ՝ զրոյական:

Ձախողման պատճառները նայենք նաև պետական համակարգի կառուցվածքային բաժանման և ենթակայությունների սահմանման տեսանկյունից: Այսպիսի վերջնական՝ զրոյական արդյունքը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ չնայած ոլորտի քաղաքականության մշակման Լիազոր մարմինը հանդիսանում է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը և ֆորմալ առումով հենց նա է հանդես եկել առաջարկությամբ, նպատակ ունենալով սպանդանոցային մորթը դարձնել պարտադիր պահանջ ամբողջ երկրի տարածքում, իրականում 2016 թ. մեկնարկած նոր մարտավարության հաջող իրագործելու «բանալին» գտնվում է «Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի» ձեռքում: Ինչո՞ւ, բացատրենք. համաձայն սույն ծրագրի ընտրվել է պարտադրանքի մեթոդով հաջողության հասնելու մարտավարությունը, ինչը ենթադրում է, որ ՍԱՏՄ-ն ամենուր և ամեն օր պետք է արգելի բակային մորթը, արգելի այդպիսի մսեղիքի և սպանդային ենթամթերքների իրացումը, մորթի ենթակա կենդանիների շարժը:

Կատարենք պահանջի հաշվարկը. ՀՀ-ում վերջին տաս տարիների վիճակագրական տվյալների համաձայն, տարեկան միջին հաշվով բուծվում է շուրջ 600 000 գլուխ խոշոր և 600 000 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ: Կովերը ընդհանուր գլխաքանակում շուրջ 45% են, իսկ մաքիները՝ շուրջ 70%: Տարեկան մորթվում է մոտ 200 000 գլուխ տավար և մոտ 400 000 գլուխ ոչխար[30] (խիստ միջինացված՝ տարեկան մոտ 600 000 գլուխ խոշոր և մանր եղջերավոր կենդանի[31] միասին վերցված):

Կարո՞ղ է արդյոք որևէ կառույց լիովին վերահսկել այս գործընթացը, հակադրվելով շահագրգիռ կողմերի ակտիվ դիմադրությանը: Ի՞նչ մարդկային ռեսուրսներ և ի՞նչ տեխնիկական հագեցվածություն պետք է ունենա նա, բյուջետային ի՞նչ ծախսերի հետ գործ կունենա և արդյունավետ կլինի արդյոք: Ինչպես տեսանք՝ ոչ:

Հատկանշական է, որ նույն գործառույթի համար երկու և ավելի պատասխանատուներ սահմանելու, մեկ մարմնի կողմից սահմանվող, բայց իրականացման արդյունավետությունը բացառապես այլ մարմնին փոխանցելու սովորույթը լայն տարածված է ՀՀ իրավանորմատիվային փաստաթղթերի ընդունման պրակտիկաներում: Բազմաթիվ են այդօրինակ նորմատիվային ակտերը, երբ նախաձեռնող գերատեսչությունը/մարմինը խնդրահարույց պահանջների կատարման լիազորությունը վերահասցեագրում է մեկ այլ մարմնի, ակնհայտ ձախողման պատասխանատու կարգելով վերջինիս: Նախնական հաշվարկներով խնդրահարույց պահանջների կատարումն առավել շատ լիազորված է տեղական ինքնակառավարման մարմիններին: Այսպիսի մի օրինակի անդրադարձ կա վերևում, երբ ներկայացվում է սպանդի ոչ ենթակա, չախտորոշված հիվանդությամբ հիվանդ, անկած կամ հոգևարքի վիճակում գտնվող կենդանիների թաղման գործընթացը: Կամ *«Հայաստանի Հանրապետությունում աշնանացան ցորենի արտադրության խթանման 2023-2027*

[30] Սրանք մոտավոր թվեր են, բայց մոտ են իրականությանը:

[31] Կենդանի արտահանված կենդանիների քանակները ներառված են այս ցուցանիշում:

թվականների պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին»[32] որոշման պահանջը, համաձայն, որի հավելվածի 14 և 15 կետերի՝ «Համայնքի ղեկավարի կողմից սահմանված կարգով իրականացվում է համատարած մոնիթորինգ՝ ցորենի սերմերի ծլարձակումից հետո, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը: Համայնքի ղեկավարը մոնիթորինգն իրականացնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ամփոփում է իր կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքները և մոնիթորինգի դրական եզրակացությամբ շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնում է ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ նախարարության կողմից մշակված ու հաստատված և մինչև տվյալ տարվա օգոստոսի 1-ը համայնքին և մարզպետարանին տրամադրված ձևաչափով: Կից ներկայացվում է նաև յուրաքանչյուր շահառուի մոտ իրականացված մոնիթորինգի արձանագրությունը, որի օրինակելի ձևը մշակում և հաստատում է նախարարությունը և մինչև տվյալ տարվա սեպտեմբերի 1-ը տրամադրում համայնքին:

Ակնհայտ է, որ համայնքին նման լրացուցիչ լիազորություններով օժտելու համար անհրաժեշտ կլինի համապատասխան փոփոխություններ կատարել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 179 հոդվածի 1-ին կետում:

Ի սկզբանե, երկրորդ փուլով պայմանավորված պարտադիր կատարման սույն պահանջը, իրերի այսպիսի դասավորության պարագայում, ենթակա էր ձախողման, ինչի մասին դեռ նախաձեռնության մեկնարկում, տարբեր ձևերով ու միջոցներով տեղեկացվել են դրա հեղինակները, որոնք ինչպես տեսնում ենք, անտեսել են, համոզված լինելով սեփական ճշմարտացիության մեջ, արդյունքում՝ վատնելով հանրային հսկայական միջոցներ: Դիտավորություն է սա, թե ոչ կոմպետենտ վարքագիծ:

Վարչական ապարատի կատարած ծախսերը հաշվելի են՝ ներգրաված անձինք, ժամանակագրություն, աշխատավարձ, գումարելով վերջիններիս աշխատանքային պայմանների ապահովման համար պետական բյուջեից հատկացված ծախսերը բանաձևի կիրառմամբ:

4.2. Գործարար ներդրումներ

Գյուղատնտեսության և էկոնոմիկայի նախարարությունների, սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինների կողմից տարբեր ժամանակահատվածներում սպանդանոցների քանակի ու հզորությունների վերաբերյալ հրապարակվել են տարբեր տվյալներ: Վերջին տվյալների համաձայն, սպանդանոցային համատարած մորթի անցում կատարելու ծրագրի մեկնարկից սկսած, ՀՀ-ում կառուցվել և վերակառուցվել է տարբեր հզորությունների շուրջ 90 սպանդանոց, իսկ հավակնորդ է դարձել շուրջ 270 անձ, որոնց գերակշիռ մասը, տարբեր պատճառներով, ինչ որ փուլում փոխել է սպանդանոց կառուցելու նախնական մտադրությունը:

Այստեղ կարևոր է նշել, որ սպանդանոցների հզորությունների, ինժեներական պահանջների, սարքավորումների, տարբեր շինությունների, նրանց տեղակայման և այլ պահանջների վերաբերյալ տեղեկատվություն-պահանջը հրապարակվել է 2017 թ. սեպտեմբերի 11-ին, Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի կողմից, վերը ներկայացված «Տնտեսական հետազոտությունների և զարգացման աջակցության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Սպանդանոցների ստեղծման ծրագրի[33]» շրջանակներում և գործում է մինչ այժմ: Սույն ծրագրի համաձայն,

---

[32] Սույն որոշման նախագիծն ամբողջ փաթեթով՝ https://www.e-draft.am/projects/5871/about

[33] ՓՄՁ ԶԱԿ պաշտոնական կայք էջ, «Սպանդանոցային ծրագրի զարգացման նկարագիր» https://smednc.am/hy/inner/553

թույլատրվում է չորս տիպի և հզորության սպանդանոցների կառուցում, որոնցից յուրաքանչյուրի համար սահմանված են անհրաժեշտ շենքերի չափերն ու սարքավորումների ցանկը:

Մասնավոր ձեռնարկատիրության զարգացման համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր գործարար սուբյեկտ սեփական նորարարական, ստեղծարար, ինքատիպ կարողությունները ավելացնելու հնարավորություն ունենա, որը հնարավորություն կտա շուկայի մրցակիցների նկատմամբ ունենա նախընտրելի դիրք, այնինչ վերը նշված սպանդանոցներին ինժեներական և շենքային պահանջների նկատմամբ ներկայացվող պահանջները[34] ուղղակիորեն բացասական ազդեցություն է ունենում ինժեներական նորարարական մտքի զարգացման վրա: Ինչ որ ինժեներական մտահաղացման, տեխնոլոգիական, սարքավորումների նորարարության հնարավորություն անգամ չկա, քանի որ հստակ, պահանջի տեսքով սահմանված են ընդունելի միակ ձևերն ու միջոցները:

Սպանդանոցի կառուցման, հողատարածքի ձեռքբերման, անհրաժեշտ սարքավորումներով, տրանսպորտային միջոցներով հագեցնելու, աշխատակազմի ներգրավման, կենդանիների գնման և այլ պարտադիր աշխատանքների ու միջոցառումների համար, գործարարը ծախսել է մի քանի հարյուր հազար ԱՄՆ դոլար՝ երևանամերձ մարզերում հողի գնով պայմանավորված, այս ծախսերն անհամեմատ ավելին են: ՀՀ Էկոնոմիկայի նախարարության հրապարակումներից պարզ է դառնում, որ գործարարները հիմնականում օգտվել են աջակցության ծրագրերից, ինչը ենթադրում է, որ կան նաև բանկային տոկոսադրույքներ, որը ևս ենթակա է սպասարկման նույն գործարարի կամ պետության կողմից՝ եթե առկա է տոկոսադրույքի պետական սուբսիդավորման կոմպոնենտը: Սակայն գործարարների ներդրումներն ու ակնկալիքները չարդարացան ու նրանցից որոշները հուսալքված մտածում են սպանդանոցները վաճառելու մասին, որպես անելանելի վիճակից դուրս գալու միակ միջոց:

Ի՞նչ հավելյալ եկամուտ ստացավ պետությունը իրավական և գործառնական պատրվակ ստեղծելով գործարար համայնքի այսչափ մեծ գումարները «քսեցնելով»: Գործարարները, հավատալով պետական մարմինների գրավոր և բանավոր խոստումներին, հսկայական ներդրումներ կատարեցին և հայտնվեցին ձեռնունայն վիճակում՝ սպանդանոցները չեն գործում և հույս էլ չկա, որ կգործեն, իսկ ամենամսյա հարկերը, տուրքերն ու բանկային տոկոսադրույքներն անհրաժեշտ է սպասարկել, շինություններն ու սարքավորումներն ու ամորտիզացիոն մշտական ծախսեր են պահանջում:

4.3. Հանրության սպասելիքները

Պետական ապարատը հանրության շրջանում թյուր կարծիք է ստեղծել, թե սպանդանոցային ցանցի ձևավորումը առողջ միս-մսամթերքով բնակչությանը սպասարկելու միակ և բավարար պայմանն է, ու պետական մարմինների կատարած քայլերը հենց այդ խնդրի լուծմանն են միտված: Սակայն, ինչպես տեսնում ենք, սպանդանոցները կան, բայց չեն գործում: Այս դեպքում հարց է առաջանում՝

- ✓ ի՞նչ որակի միս է իրացվում հայաստանյան շուկայում,
- ✓ հնարավոր է արդյոք, որ այն անառողջ միս է, եթե անառողջ է, ապա ինչ հետևանքներ կարող է ունենալ բնակչության առողջության վրա և ու՞ր են պետական պատկան մարմինները, ինչու՞ չեն կանխում,
- ✓ իսկ եթե անառողջ չէ և կարելի է առանց սպանադանոցային մորթի ևս ունենալ առողջ միս մսամթերք, ապա ո՞րն էր այս ահռելի ջանքերի ու ծախսերի իմաստը:

[34] ՓՄՁ ՁԱԿ պաշտոնական կայք էջ «Սպանդանոցային ծրագրի զարգացման նկարագիր» https://smednc.am/hy/inner/5533

ՀՀ կառավարության կողմից նախաձեռնած այս նախագիծը ուղղակիորեն բացասական ազդեցություն է թողել մեր պետականության, մեր երկրի բարձրագույն իշխանությունների նկատմամբ հանրային վերաբերմունքի ձևավորման վրա: Կորցնելով հանրային վստահությունը, հետագայում շատ մեծ ջանքեր ու ռեսուրսներ կպահանջվի գործադրել այն վերականգնելու համար:

4.4. Անասնապահության ոլորտի սպասելիքները

Ինչպես նշվեց վերևում, ՀՀ-ում անասնապահության ոլորտում ներգրավված է շուրջ 182 000 միավոր, հիմնականում ֆիզիկական անձինք:

Չնայած այն հանգամանքին, որ վերջիններս ի սկզբանե համաձայն չէին պարտադիր պայմանի հետ և տարբեր ձևերով ու միջոցներով բազմիցս են հայտնել իրենց դժգոհությունը, այնուամենայնիվ սրանով հնարավոր էին համարում լուծելու միս արտադրողների ամենացավոտ՝ իրացման խնդիրը: Սակայն վերջիններիս հույսերը չարդարացան: Անասնապահական «ինդուստրիան» հիասթափված է, ու կրկին սեփական տնտեսությունում արտադրած մսի իրացումը փորձում է լուծել անձնական փորձառության, հնարամտության և տարիների ընթացքում ձևավորված շուկայական հարաբերությունների շնորհիվ:

Այստեղ հստակորեն պետք է շեշտել, որ անասնապահությամբ զբաղվողները ոչ թե դեմ են սպանդանոցային մորթին, այլև պետական մարմինների որդեգրած պայմանական երկրորդ փուլի մոտեցմանը, որի առանցքն արգելքն է: Պայմանական առաջին փուլում՝ 2015 թ. ՀՀ կառավարության կողմից ընդունված *«Հայաստանի Հանրապետությունում 2016–2020 թվականներին սպանդանոցների զարգացման ռազմավարական ծրագրի»* մշակման, հանրայնացման հարցերում վերջիններս ունեցել են անմիջական մասնակցություն:

4.5. Ներքին և արտաքին շուկաներում միս- մսամթերք իրացնողների սպասելիքները

Հայաստանի Հանրապետությունում արտադրված մսի իրացման ոլորտում ձևավորվել է գործող կայուն խավ, որը հիմնականում «իր ձեռքն է վերցրել» **իրացման ներքին շուկան**: Մսի իրացման ներքին շուկան հիմնականում «կառավարում» են մսավաճառներն ու վերավաճառողները:

Մսավաճառները երկրի ողջ տարածքում տեղաբախշված «մսի խանութների» տերերն են, և գործում են տևականորեն ձևավորված կայուն համակարգերի կիրառմամբ: Այս խմբի ձեռներեցները ունեն իրենց սպասարկող միս մատակարարողներ, որոնք հիմնականում արտադրողներ են, այսինքն անասնապահությամբ զբաղվող անձինք: Մսի խանութները մանրածախ առևտրով զբաղվողներ են, բայց հանրագումարում, մսի գնագոյացման վրա ունենում են որոշիչ ազդեցություն:

Վերավաճառողները՝ մսի արտադրության և իրացման միջանկյալ օղակն են, որոնք երկրի ողջ տարածքում մսացու կենդանիներ է գնում, անհրաժեշտության դեպքում նաև բտում և միսը վերավաճառում մսի խանութների տերերին՝ ուղղակիորեն կամ մեծածախ շուկաների միջոցով: Վերջիններից ոմանք ունեն նաև իրենց մսի խանութները: Այս խումբ ձեռներեցները ևս ունեն ահռելի դերակատարություն մսի իրացման շուկայում:

Երկու խմբերում էլ ներգրավված են մեծաքանակ անձինք, որոնք համոզված էին, որ առաջարկվող փոփոխությունների պատճառով իրենց բիզնես շահը կտուժի և սույն

մարտավարության դեմ իրականացվող հանրային ընդվզման կազմակերպման, իրականացման գործառույթներում ունեցան շոշափելի ազդեցություն:

Մսի **իրացման արտաքին շուկայի** մասնակիցներն ակնկալում էին, որ հնարավոր կլինի տևականորեն ձևավորված իրենց բիզնես գործընկերներին փաստաթղթային հիմնավորել, որ գործ ունեն հուսալի ընթացակարգերի հետ, այնինչ, վերջիններիս սպասելիքները ևս չարդարացան:

4.6. Այլ մթերքներ ու ապրանքներ ստանալու հնարավորությունները

Ինչպես նշվել է վերևում, սպանդանոցային մորթի միջոցով հնարավոր կլիներ մեր շուկայում մեծ պահանջարկ ունեցող սպանդանոցային ենթամթերքներ ստանալ: Այն ՀՀ «Անասնաբուժության մասին օրենքում» ձևակերպված է հետևյալ կերպ՝

- ✓ «կենդանական ծագման հումք՝ կենդանիների սպանդից ստացված ներզատիչ գեղձեր, աղիք, կաշի, մորթի, մազ (բուրդ, խոզան, փետուր, աղվամազ), եղջյուր, սմբակ, ոսկոր, չվերամշակված ճարպ, լեղի, արյուն, մեղրամոմ, մոմաթերթ, մեղվի թույն, օձի թույն, կարիճի թույն, կենդանական ծագման այլ թույներ, տեխնիկական ալբումին, կազեին, ժելատին, որսորդական հաղթանշաններ և այլն, որոնք օգտագործվում են վերամշակումից հետո,
- ✓ կենդանական ծագման[35] կողմնակի արտադրանք՝ մարդկանց կողմից սպառման համար չնախատեսված կենդանական ծագման հումքի և մթերքի արտադրության, վերամշակման արդյունքում ստացված արտադրանք (մսոսկրային և մսային, եղջերային գոյացություններից ստացված, ձկնային այլուր, արյան չորացված պլազմա և արյունից ստացված այլ արտադրանք, հիդրոլիզային սպիտակուցներ, ոսկորներից և կենդանական ծագման այլ արտադրանքներից ստացված ժելատին), կենդանիների դիակներ, որոնք հանդիսանում են տեխնիկական հումք, նախատեսված չեն մարդկանց կողմից սպառման համար և ենթակա են լրացուցիչ վերամշակման կամ ոչնչացման»:

Այս ապրանքները մեր տնտեսության կարիքների բավարարման համար հիմնականում ներկրվում են, իսկ մեր արտադրված ռեսուրսը անասնապահության ոլորտի հավելյալ եկամուտներ չի բերում, ինչը շատ մտահոգիչ է: Չնայած, որ սա սույն ծրագրի նպատակային թիրախներից էր, սակայն որևէ նոր արտադրանք, մթերք, որի գոյությունը պայմանավորված կլիներ սույն նախաձեռնությամբ՝ չկա:

[35] Անասնաբուժության մասին ՀՀ օրենքը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docID=101830

5. ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով, ուզում եմ նշել, որ 2016 թվականի սեպտեմբերից ՀՀ կառավարության կողմից մեկնարկած, մինչ այդ 2015 թվականին, իր իսկ կողմից, նույն ոլորտի, նույն առարկայի զարգացման նպատակով հաստատված սկզբունքորեն հակասող մեկ այլ որոշմամբ սահմանված մարտավարությունն ունեցավ վնասարար ազդեցություն ներգրավված բոլոր կողմերի համար: Ծախսվեցին ահռելի հանրային միջոցներ, գործարարների կատարած ներդրումները չարդարացան, հանրային սպասելիքները որևէ դրական արդյունք չարձանագրեցին, ավելին՝ նպաստեցին պետական ապարատի նախաձեռնած քայլերի նկատմամբ անվստահության մթնոլորտի ավելացմանը:

Սպանդանոցային համատարած և պարտադիր մորթի նախագիծը իրականություն չդարձավ, ծրագրի ընթացքում գործող սպանդանոցների գերակշիռ մասը մատնված է հարկադիր պարապուրդի, բնակչությունը շարունակում է ձեռք բերել պատահական ծագում ունեցող միս և մսամթերք: Որևէ նոր ապրանք, մթերք, որի ծագումը կապված է սպանդանոցային ենթամթերքի հետ, չի արձանագրվել: Եվ սա արդյունքն է պետական գրեթե ողջ ապարատի շուրջ յոթ տարվա ամենօրյա «տքնաջան» աշխատանքի: Ծախսվել է մասնավոր հատվածի մի քանի միլիոն ԱՄՆ դոլար, նկատելի ձեռքբերումը մեր պետականության նկատմամբ սասանված հանրային վերաբերմունքն է:

Որո՞նք են, ի վերջո, այս համատարած և ամբողջական ձախողման հիմնական պատճառները՝

5.1. Ներգրավված պաշտոնատար անձանց թերի կոմպետենցիաները

Հասկանալու համար, թե ինչպիսի ծրագրեր են իրականացվում գյուղատնտեսության բնագավառի Լիազոր պետական մարմնում, դիտարկենք դրանցից մի քանիսը[36]:

Օրինակ՝ «Տավարաբուծության զարգացման ծրագիր», որը ենթադրում է տոհմային կենդանիների ներկրում: Այս ծրագիրը նախաձեռնել և ֆինանսավորել է Ճապոնիայի կառավարությունը, 2007 թ.: Կամ՝ «Փոքր ու միջին անասնաշենքերի կառուցման և վերակառուցման, դրանց տեխնոլոգիական ապահովման աջակցության» ծրագիր, ինչը ենթադրում է, որ ծրագրում նախատեսված ինժեներական, սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման դեպքում, անասնատերերը փոխհատուցվում են և այնտեղ բուծվող կենդանիներից ավելի մեծ եկամուտներ է ստանալու: Կամ մեկ այլ ծրագիր՝ «Հայաստանի Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2023 թթ. ծրագիրը», որը ենթադրում է առավել շատ և որակյալ բերք:

Այն, որ եվրոպական երկրներում առաջավոր սելեկտիվ աշխատանքների շնորհիվ ստացած տոհմային կենդանիներն առավել մթերատու են, կամ, որ սանիտարահիգիենիկ պայմանների փոփոխությամբ կստանանք առավել շատ մթերք, կամ ինտենսիվ այգիներն առավել շատ բերք են ենթադրում, նորություն չէ և ոչ ոք դա չի վիճարկում:

Բայց, որպեսզի ունենանք զարգացած անասնապահություն, կամ առավել շատ անասնապահական ծագում ունեցող մթերք, կամ բարձր քանակական և որակական

[36] ՀՀ Էկոնոմիկայի նախարարության էլեկտրոնային կայք էջ՝ https://mineconomy.am/page/1338

հատկանիշներով օժտված այգիներ ու նաև բերք, անհրաժեշտ է խնդիրը գնահատել ամբողջական արժեշղթայի պրիզմայով: Եթե արժեշղթայի մնացած բաղադրիչները զարգացած չեն, կամ չեն համապատասխանում անհրաժեշտ պայմաններին, մեծանում են, որոշ դեպքերում ել անհաղթահարելի են դառնում գործարար ռիսկերը: Գործարար հանրույթը պետության բարձր հեղինակությանը վստահելով ներդրումներ է անում և հիասթափությունը իրենց սպասել չի տալիս, քանի որ միայն տոհմային կենդանին, կամ խելացի անասնաշենքը, կամ ինտենսիվ այգին բավարար չեն անհրաժեշտ զարգացում ունենալու համար: Անհրաժեշտ են որակյալ մասնագետներ՝ անասանբույժեր, ագրոնոմներ, բույսերի պաշտպաններ, կենդանիների կերակրման ռացիոններ մշակողներ՝ անասնաբույծեր, հովիվներ, կթվորներ, տրակտորիստներ, սառնարաններ, վերամշակման հանգույցներ, իրացման[37] համապատասխան շուկաներ և այսպես շարունակ: Ի հավաստումն վերը ներկայացվածի, բոլորիս աչքի առաջ է կաթի կամ պտուղ[38] բանջարեղենի իրացման հետ կապված խնդիրներրը, որոնք գրեթե ամենօր են:

Ավելի առարկայական դարձնելու համար բովանդակային քննարկման ենթարկենք մի ծրագիր ևս՝ «Հայաստանի Հանրապետությունում աշնանացան ցորենի արտադրության խթանման պետական աջակցության ծրագիր[39]», որը ընդունվել է 2 հուլիսի 2020 թվականին ՀՀ կառավարության N 1148-Լ որոշմամբ: Այս ծրագիրը առաջարկում է աշնանացան ցորենի մշակությամբ զբաղվող յուրաքանչյուր շահառուին փոխհատուցել 1 հա-ի հաշվով հավաստագրված սորտերի էլիտային կամ 1-ին վերարտադրության սերմերով ցանքի դեպքում՝ 120,0 հազար դրամ, և չհավաստագրված սերմերով ցանքի դեպքում՝ 70,0 հազար դրամ:

Ծրագիրը տեղադրված[40] է պաշտոնական կայք էջերում: Ծրագիրը նախաձեռնողները չեն նախատեսել մոնիթորինգի, ծրագրային արդյունքների գնահատման որևէ գործառույթ և ինչ որ անհասկանալի ու անտեսանելի ցուցանիշներից ելնելով վերախմբագրման նախաձեռնությունն են ցուցաբերել արդեն 2023 թվականին, ընդգրկման աշխարհագրության մեջ ներառելով նաև Արարատի[41] և Արմավիրի մարզերին, որոնք նախորդ ծրագրի շահառուները չէին:

Գայթակղում է, իհարկե ֆերմերին՝ մեկ հեկտարի համար 120 000 փոխհատուցում ստանալ: Բայց ինչ պատկեր ունենք ներկայումս՝ 07.07.2023 թվականին՝ որևէ մեկ կիլոգրամ ցորեն ծախելու ամենաչնչին հնարավորություն անգամ չկա, քանի որ այլուր արտադրող, ցորենից օղի արտադրող կազմակերպությունները Ռուսաստանի Դաշնությունից մեծաքանակ ցորեն են ներկրել ու հայաստանյան ֆերմերի արտադրանքի կարիքն անգամ չունեն: Արտերը հասել են, հունձի շրջանն է, գնորդ չկա: Ոչ թե էժան գնով, այլ ընդհանրապես գնորդ չկա: Ի՞նչ անի պետական ծրագրով գայթակղված աշնանացան ցորեն արտադրած գյուղացին: Մեծածավալ ցորենի պահեստավորման համար նախատեսված տարածքներ չկան, հունձի ձգձգումներն էլ խոստանում են բերքի մասնակի կամ ամբողջական կորուստ:

Որքան բովանդակային նմանություն ունեն վերը նշված այսպես կոչված զարգացման ծրագրերը, մի դեպքում սպանդանոց կառուցողն է «կրակն ընկել», մյուս կողմից՝ աշնանացան ցորեն, ակմ կաթ, կամ ծիրան արտադրողը:

Չենք կարծում, որ գյուղատնտեսության զարգացման պատասխանատուները դիտավորություն ունեն ու կանխամտածված վնասում են իրենց իսկ զարգացման պատասխանատվության ներքո

---

[37] https://armenpress.am/arm/news/1108585/

[38] https://factor.am/657316.html

[39] ՀՀ էկոնոմիկայի նախարարության կայք էջ՝ https://mineconomy.am/page/2209

[40] ՀՀ Կառավարության 2 հուլիսի 2020 թվականին ընդունված N 1148-Լ որոշումը
«ՀՀ աշնանացան ցորենի արտադրության խթանման պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին»
https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=153107

[41] ՀՀ աշնանացան ցորենի արտադրության խթանման 2023-2027 թվականների պետական աջակցության ծրագիրը
https://www.e-draft.am/projects/5871

գտնվող բնագավառը: Խնդիրը պետական համակարգում ընդգրկված պաշտոնատար անձանց կոմպետենցիաների դաշտում է, որոնք դրսևորվում են նեղ մասնագիտական կարողություններով, թերի զարգացվածությամբ, մակերեսային գիտելիքներով, սխալ, չարդարացված, անհեռանկարային աշխատանքային վարքանոնով և աշխատաոճով:

Ամբողջ արտադրական արժեշղթայում առանձնացնել մի օղակ և այն էլ առանց ընտրույթի հիմնավորման, ստեղծել հաջողության պատրանք ներդնողների համար, ինչ որ առումով անազնիվ է և անհեռանկարային: Այնպես, որ միանվագ գործողությունների և պարզունակ որոշումների ժամանակներն անցել են և անհրաժեշտ է սկսել գյուղատնտեսության բնագավառի երկրորդ[42] սերնդի բարեփոխումների ծրագիր և դրա առանցքային հարցը պետական համակարգում ընդգրկված անձանց կարողությունների զարգացումը պետք է լինի:

5.2. Ժողովրդավարական սկզբունքների վերաբերյալ պետական մարմիններում ընդգրկված պաշտոնատար անձանց գիտելիքներն ու պատկերացումները

Պետական ապարատում ներգրավված անձինք, ովքեր պատասխանատվություն են կրում այս կամ այն բնագավառի զարգացման համար, պատրաստ չեն բաց և ուղղիղ երկխոսության: Նրանց հակադիր կարծիք հայտնող անձինք, մասնագետները հայտնվում են անցանկալի անձանց ցանկում և շատ հաճախ քննարկումներին նրանց ներկայությունը դառնում է անհնար: Հետևապես, կարծիքներ հավաքագրվում են հիմնականում ցանկալի և ձեռնտու աղբյուրներից, մշակվում են այդ բովանդակության փաստաթղթեր, որոնք կամ ունենում են սահմանված նպատակի տեսանկյունից հակառակ էֆեկտ, կամ լավագույն դեպքում՝ անիմաստ նախաձեռնություն:

Խնդիրը նոր չէ, բազմիցս է քննարկվել և որպես լուծում ՀՀ արդարադատության նախարարության կառուցվածքում, Եվրոպական Միության և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի աջակցությամբ **գործում է «Իրավական ակտերի նախագծերի**[43] **հրապարակման** միասնական կայքը», որտեղ շահագրգիռ անձինք իրենց առաջարկություններն ու նկատառումները կարող են ներկայացնել նախագիծը մշակող պաշտոնատար անձին: Սակայն, թե ինչպի՞սի էական որակական փոփոխություններ են արձանագրել այս կայքի գործարկման շնորհիվ պետական մարմինների կողմից մշակվող իրավական նախագծերում, նախարարության պաշտոնական հրապարակումներում որևէ հաշվետվության չենք հանդիպում:

Չնայած այն հանգամանքին, որ կայքն այն առցանց հարթակ է հանդիսանում, որը պետք է ապահովի գերատեսչությունների կողմից իրավական ակտերի նախագծերը հանրությանը ներկայացնելու, առցանց տարբերակով հանրային քննարկումներ կազմակերպելու հնարավորություն, արդյունքում նաև՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին ակտիվ մասնակցություն իրականացվող օրինաստեղծ աշխատանքներին: Ինչ որ փուլում նկատելի էր փորձագետների տեսանելի ակտիվություն, փաստաթղթեր կային, որոնց վերաբերյալ արձանագրվում էին շուրջ 20-30 կարծիքներ, սակայն հատկապես գյուղատնտեսության բնագավառում ներգրավված փորձագետները օրեցօր նվազում են, իսկ շատ դեպքերում կարծիքները, առաջարկությունները, դիտողություններն իսպառ բացակայում են:

---

[42] Իմ կարծիքով հողի սեփականաշնորհումից հետո, երկրորդ սերնդի բարեփոխումներ չեն իրականացվել:

[43] Վերջերս տեղեկություններ կան, որ կայք էջի բարեփոխման նպատակով քայլեր են ձեռնարկվել:

Բայց կա նաև տեղեկություններ, որ ձեռնարկվել է սույն կայքի բարեփոխման ծրագիր, և այդ նպատակով էջում գրանցված անձանցից հավաքագրվում են գրավոր առաջարկներ: Թե ի՞նչ կունենաք այդ բարեփոխման արդյունքում, դեռևս տեսանելի չէ:

Պետական ապարատում ընդգրկվող կադրերի համակողմանի պատրաստվածության խնդրի պատասխանը տևական ժամանակ է չի տալիս հենց այդ նպատակով հիմնված, նախկինում անկախ, **իսկ ներկայումս Վարչապետի աշխատակազմում գործող «Քաղաքացիական ծառայության գրասենյակը»**, որի գոյության արդարացիությունը լուրջ կասկածների տեղիք է տալիս: Այս կառույցը պետք է ապահովի անհրաժեշտ կարողություններով օժտված մասնագետների ներգրավվածությունը պետական կառավարման համակարգում, սակայն ինչպես տեսնում ենք, պատկերը բոլորովին այլ է:

Մի նախաձեռնություն ևս կա պետական համակարգում մասնագիտական ներուժի բավարարման նպատակով, դա արտերկրից պետական բյուջեի հաշվին **լրացուցիչ վճարներով աշխատող**[44] **այսպես կոչված պրոֆեսիոնալներին պետական համակարգում ընդգրկելու ծրագիրն** է, որի արդյունավետության վերաբերյալ կան որոշակի կասկածներ:

Արտերկրում կայացած պրոֆեսիոնալի բազային գիտելիքներ ստանալու գործընթացը տարբերվում է ՀՀ-ում կիրառվող ընթացակարգերից, վարչական փոխհարաբերությունները, վարչատարածքային բաժանումներն ու դրանով պայմանավորված իրավահարաբերությունները յուրահատուկ են մեր երկրին, ու նաև անծանոթ ներգրաված անձանց համար: Տևական ժամանակ է պահանջում այս ամենը հասկանալու, իրավիճակին հարմարվելու ու պահանջվող զարգացման միտումները կայացնելու համար: Մի խոսքով, արտերկրի պրոֆեսիոնալները հայաստանյան պետական կառավարման համակարգի մշակույթի մաս չեն և սա հիմնական խոչընդոտներից է վերջիններիս ինքնադրսևորման համար:

Անչափ կարևոր մի խնդիր ևս՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կառուցվածքն ու կանոնադրական բովանդակությունը: Համաձայն 2018 թվականի մարտի 23-ին ընդունված *«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին»* ՀՀ օրենքի հավելվածի 15-րդ կետի, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը թվարկված ոլորտների[45] զարգացման նպատակով իրականացնում է Կառավարության քաղաքականությունը:

Ինչպե՞ս են պատկերացնում գյուղատնտեսության բնագավառի զարգացումը, որտեղի՞ց են ստանում առկա կարիքների, խնդիրների մասին տեղեկություններ, ի՞նչ կառուցվածքի օգնությամբ, ո՞վ է և ինչպե՞ս է ապահովելու տնտեսվարող-զարգացման պետական պատասխանատու կապը: Վերլուծությունը ցույց է տալիս, որ այդպիսի կայուն կապեր չկան, դեռ ավելին, վերջին տարիներին լուծարվեց ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի դաշտային աշխատանքների հետ օրգանական կապ ունեցող միակ ստորաբաժանումը, որը կոչված էր գյուղատնտեսության բնագավառում ներգրաված ֆիզիկական և իրավաբանական անձանց ապահովելու նորարությունների փոխանցման, խորհրդատվական ծառայությունների մատուցման գործառույթներ, ինչպես նաև միակ ուղղակի շփում ապահովող կառույցն էր գյուղատնտեսության բնագավառի սուբյեկտի ու պետական ապարատի միջև:

Այսինք՝ արտադրող-պետություն կապը ակտիվացնելու փոխարեն, ընտրվեց այդ կապը ինստիտուցիոնալ մակարդակում բացառապես խզելու քաղաքականություն, փոխարենը ոչինչ չառաջարկելով:

---

[44] Արմենպրես լրատվական գործակալություն
https://armenpress.am/arm/news/1089739.html

[45] Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին ՀՀ օրենք
https://www.arlis.am/documentview.aspx?docID=143868

Եթե չկան, ու փաստվում է, որ չկան իրական խնդիրների, կարիքների մասին ճշմարիտ պատկերացումներ, ինստիտուցիոնալ հավաստի տեղեկություններ, անկասկած լինելու են իրականությունից կտրված առաջարկներ, ինչը զարգացնելու փոխարեն՝ խանգարելու է, կամ լավագույն դեպքում ունենալու է չկառավարվող արդյունք:

Այսպիսի կառուցվածքով, որով ներկայումս հանդես է գալիս ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը, վերը նշված լիազորությունների կատարումը դառնում է անհնար: Նախարարության բարձրաստիճան պաշտոնյաների կողմից տարբեր ելույթներում, հանդիպումներում հնչեցվում են հաջողության տարբեր ցուցանիշներ, բայց դրանց և նախարարության ծրագրերի միջև փոխկապակցված օրգանակապ կապի մասին երբևէ խոսք անգամ չենք լսում: Պարզ իրավիճակ է՝ այդ փոփոխությունները պայմանավորված չեն նախարարության աշխատանքով և դեռ հարց է օգնու՞մ են, թե՞ խանգարում զարգացում ապահովվողներին:

Ինչո՞ւ են պետական ապարատում գործող անձինք խուսափում շահառուների հետ երկխոսությունից, հացն ունի մեկ պատասխան՝ վերջիններիս պրոֆեսիոնալիզմ մակարդակը խիստ անբավարար է, սեփական անկարողություն քողարկելու նպատակով, ամեն գնով խուսափում են համագործակցությունից, մասնագիտական դիսկուրսից:

Մի հանգամանք ևս արժանի է առավել ուշադրության, դա միս արտադրողների, կաթ արտադրողների, ագրոնոմների, խնձոր կամ ծիրան, կամ այլ բերք արտադրողների, կամ գյուղատնտեսական որևէ այլ գործունեություն իրականացնողների շահերի ու իրավունքների պաշտպանության նպատակ հետապնդող ֆորմալ կամ ոչ ֆորմալ ինստիտուտի ստեղծման, կայացման հարցն է, որի մասով պետական համակարգում լուռ անտարբերությունն է:

Էկոնոմիկայի նախարարության տարեկան բյուջեներում կամ տարբեր ժամանակահատվածներ ընդգրկող այս կամ այն զարգացման ծրագրերում ինչու՞ չեն հանդիպում այս խնդրի լուծման համար հատկացված միջոցների: Քանի որ այդ խմբերը զարգացման որևէ փուլում հանձնառություն են ցուցաբերելու, որը կարող է քաղաքական ազդեցություն ունենալ՝ նախարարի նշանակման, նախարարության գործունեության գնահատման վերաբերյալ: Որպես հետևանք ունենում ենք «կիսատ-պռատ» ծրագրեր և նույնպիսի իրականություն, ինչպիսին, որ սպանդանոցային ցանցի ձևավորման միջոցով առողջ միս ու մսամթերք բնակչությանն ապահովող երաշխավորող սույն ծրագիրն է:

5.3. Զարգացման երաշխավորողներ / ագրարային կրթություն

Վերևում նշված խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ կադրերի կերտման և բնագավառին մասնագետներով մատակարարման համար ագրարային կրթությունն դիտարկել ամենաառանցքային օղակ, որի այսօրինակ ցածր և բնագավառի կողմից չկարևորված վիճակը, որին ականատես ենք լինում վերջին տարիներին, անչափ մտահոգիչ է:

Ըստ էության, ի՞նչ խնդիր է հանձն առել ագրարային կրթությունը, որտե՞ղ է տեսնում իրեն, ինչպե՞ս է դիրքավորվում գյուղատնտեսության զարգացման տիրույթում: **Այսինքն՝ ագրարային մասնագետները սպասարկելու, թե՞ զարգացնելու են գյուղատնտեսության բնագավառը**: Այս ռազմավարության ընտրությամբ է պայմանավորվելու ագրարային կրթության դիրքը գյուղատնտեսության բնագավառում, և դրան են հաջորդելու ու պարբերաբար կատարելագործելու կրթական ծրագրերն ու դասավանդվող առարկաները:

Սակայն, դեռևս տեսանելի չէ, թե ինչպես են դիրքավորվել ագրարային կրթություն ապահովող ուսումնական հաստատությունները, ինչն էլ դարձել է վերջիններիս նկատմամբ դիմորդների տոտալ անվստահության պատճառ:

Ագրարային կրթության համար պետությունն անգամ բացառիկ կրթաթոշակներ է տրամադրում, որը շուրջ 15-20 անգամ մեծ է մնացած մասնագիտություններով սովորողների համար նախատեսված կրթաթոշակներից, այնուամենայնիվ, ամեն տարի արձանագրվում է դիմորդների էական նվազում, չնայած, որ մեր երկրում հաշվառված են շուրջ 350 000 ֆերմերային տնտեսություններ և վերջիններս ունեն բարձր որակավորում ունեցող մասնագետների մեծ պահանջարկ:

Ինչու՞ դիմորդները չեն ցանկանում ստանալ գյուղատնտեսական մասնագիտություն, ինչով է պայմանավորված համապարփակ անվստահության այսպիսի իրավիճակը:

Եթե խնդրին նայենք գլոբալ առումով, **կամ կրթություն տրամադրողներ են թերանում, կամ էլ թերանում են գյուղատնտեսական միջավայրերը զարգացնողները**: Այս դեպքում, ո՞ւր են դեբատները ագրարային կրթական միջավայրի և բնագավառի զարգացման պատասխանատուների միջև, ինչո՞վ է պայմանավորված այսօրինակ երկուստեք լուռ հարմարվողականության դրսևորումը: Տպավորություն է, որ երկու կողմերին էլ ձեռնտու է այս իրավիճակը:

Ագրարային կրթության ոլորտում կոսմետիկ փոփոխությունները դժվար թե ցանկալի արդյունքի հանգեցնեն: Այստեղ անհրաժեշտ են արմատական բարեփոխումներ, որոնք ենթադրում են վերանայել գյուղատնտեսական կրթություն տրամադրող բուհերի ու քոլեջների դերը, դասախոսական անձնակազմի ներգրավվածությունն արտադրության մեջ, կրթական և գործնական ծրագրերի համապատասխանությունն շուկայի պահանջներին, հավաստագրման նոր ձևերի ներդրում և կարգավիճակային կառույցների հիմնում:

6. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տարբեր պարբերություններում վերևում շարադրված են սույն վերլուծության շնորհիվ բացահայտված խնդիրներ ու առաջարկված են լուծման տարբերակներ: 2016 թվականի հոկտեմբեր ամսին մեկնարկած «*Պարտադիր սպանդանոցային մորթի կիրառման ոլորտները և ժամանակացույցը սահմանելու մասին»* ՀՀ Կառավարության որոշումը, թերի ու չհաշվարկված բովանդակության, որը հետևանք է պետական մարմինների ոչ կոմպետենտ քայլերի ու վարքականոնների, ինչպես նաև համագործակցային սկզբունքների անտեսման թիրախ ոլորտի զարգացման փոխարեն արձանագրեց հետընթաց բոլոր ուղղություններով՝ սպանդանոցային ցանցը ձևավորված չէ, գործարար ներդրումները չարդարացան, առողջ միս ու մսամթերք ստանալու կայուն համակարգեր չկան, անասնապահությամբ զբաղվող անձինք ինքնուրույն են հոգում սեփական կարիքները, վատնվեցին ու վատնվում են բյուջետային ահռելի միջոցներ:

Այս ամենի մասին անդրադարձ է կատարվել սույն վերլուծության տարբեր պարբերություններում, ուստի գնահատելով ստեղծված իրավիճակը, առաջարկում եմ առաջին հերթին ժամանակավորապես դադարեցնել պարտադիր սպանդանոցային մորթի կիրառման ոլորտները եվ ժամանակացույցը սահմանելու մասին ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված պահանջների կիրառումը: Քանի որ, սույն որոշման համաձայն ստեղծվել է իրավական կազուս, սահմանված են պարտադիր կատարման պահանջներ, բայց նրանք գործնականում չեն իրականանում: Այսպիսի իրավիճակը իրավական հետևանքներ է ունենում պահանջի կատարման նկատմամբ հսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց համար:

Նույնչափ կարևոր եմ համարում նաև նոր մարտավարության ընդունումը, որի մշակման, իրականացման, հսկողության գործառույթները պետք է հավասարապես բաշխված լինեն պետական համակարգի, գործարար համայնքի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև, համագործակցային համակեցության սկզբունքի հիման վրա: Նոր ծրագիրը պետք է ցույց տա սպանդանոցի դերն ու նշանակությունն առողջ միս ու մսամթերք ստանալու արժեշղթայում: Այսինք, սպանդանոցն առանձին, անասնապահության ոլորտից ու մսի իրացման շուկայից դուրս դիտարկելը կբերի նույն արդյունքներին, ինչպիսին որ ներկայումս է:

Ստեղծված իրավիճակում արդյունավետ կլինի տարբեր կլաստերների ստեղծման միջոցով վերագործարկել կառուցված սպանդանոցները: Օրինակ՝ մի տեղում դա կլինի սպանդանոց, որը բացի կենդանիների մորթելուց օժտված կլինի նաև արյան վերամշակման կարողություններով, մյուս տեղում դա կլինի աղիներից կամ ոսկորներից ինչ որ այլ մթերք ստանալու կարողությամբ օժտված, մեկ այլ վայրում սպանդանոցը կմասնագիտանա մսից այլ մթերքներ ստանալու մեջ, իսկ մեկ այլ վայրում սպանդանոցը կլինի մսի երկարատև պահպանման վայր և այսպես շարունակ, շուրջը ձևավորված կլաստերի ներքին տրամաբանությանը համաձայն: Թվարկված կամ չթվարկված կլաստերային բոլոր ձևերում սպանդանոցը պետք է լինի կրթական համակարգի գործընկերն ու կրթական համակարգի մասը:

Գործուն քայլեր են պետք նախաձեռնել արդեն իսկ կառուցված սպանդանոցների վիճակը բարելավելու ուղղությամբ, ընդհուպ մինչև հարկադիր պարապուրդի համար փոխհատուց ման տրամադրումը: Սպանդանոցները հայտնվել են այս բարդ իրավիճակում պետական պատասխանատու մարմինների կողմից դրսևորած անպատասխանատու վարքագծի պատճառով:

Սպանդանոցների կայուն գործունեության ապահովման համար անչափ կարևոր է սպանդանոցների միավորմամբ հասարակական կազմակերպության ստեղծումը: Այստեղ է սպանդանոցների կողմից մատուցվող ծառայությունների որակի հետ կապված խնդիրների

լուծումը, ինչպես նաև սպանդանոց և արժեշղթայի այլ մասնակիցների միջև ազնիվ ու հուսալի գործընկերոջ համբավ ունենալու նպատակով կատարվելիք միասնական վարքականոնների ընդունումն ու նրանց կիրառման նկատմամբ հսկողությունը: